

# Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

## ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

### ՍՈՎԻԵՏ ՍՔՈՒԱՍՏԻԿՈՍԻ «ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՈՒ ՄԻՂԲԵՍՏՐՈՍԻ ՎԱՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

*«Խորենացին հայկական պատմաբանից հակայն է և հնույթեանց գանձ, և եթէ տոկաց տեղց տարիներ յառաջ տևտոնեան (Գուղշմիդի) ծանր հարվածոց, նոյնը դիւրաւ շփտի ընկճի նաև քաջակորով նորմանի (Կարրիերի) շողացուցաց սայրասուր սլաքի ներքև»:*

*Հ. Բարսեղ Սարգիսեան  
(Վենետիկի Մխիթարյան)*

651 թվականից ի վեր, երբ արաբական ցեղերի հարվածներից ընկավ Մասանյանների տերությունը Իրանում, բյուզանդական կայսրերի համար սկսվեց «բարեպատեհ» մի շրջան՝ Մասանյան դարավոր ախոյանից ձերբազատվելուց հետո նոր բռնաճնշումներ գործադրելու Հայաստանի վրա: Բյուզանդական քաղկեդոնականությունը դարձավ հայ եկեղեցու համար ավելի անհանդուրժող, խարդավանող որոգայթ, քան Մասանյանների երբեմն բոցկլտացող, երբեմն էլ մարմրող կրակապաշտությունը:

VII դարի սկզբին ծագած բյուզանդա-իրանական երկարատև պատերազմի ժամանակ (604-629 թթ.), օգտվելով Հերակլ կայսեր հեռագնա ներխուժումից Կուր-Արաքսյան հովիտը, որի նպատակն էր Աղվանքի միջով անցնել Վրաստան՝ «ընդ Աղուանս անցանել ի Վիրս»<sup>1</sup>, Կյուրիոն կաթողիկոսի գլխավորու-

<sup>1</sup> Պատմություն Սեբեոսի, աշխ. Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, գլ. ԼԸ, էջ 125:

Թյամբ Վրաց եկեղեցին անշատվեց Հայ եկեղեցուց ու Գրիգոր Լուսավորչի աթոռից և ընդունեց բյուզանդական քաղկեդոնականություն: Բյուզանդիայի հովանու տակ հայտնված վրաց հոգևոր և աշխարհիկ իշխանները հետզհետե իրենց ազդեցության տակ էին առնում Կուրի առափնյա հայկական հինավուրց տարածքները՝ Գուգարք, Գարդաբանի (Գարդման) և այլն: Չնայած դրան՝ այդ ժամանակից հետո էլ վրաց տիրապետության տակ անցած Գուգարքը, իրենք՝ վրացիք, նախկին սովորությանմբ շարունակում էին անվանել Սոմխեթի (Հայաստան)<sup>2</sup>: Մինչև իսկ նոր շրջանում՝ 1840-ական թվերին, գերմանացի աշխարհահռչակ երկրաբան Հերման Աբելիսը իր առօրյա դիտարկումների հիման վրա վկայում էր, թե Լոռին (Գուգարքը) վրացիք Սոմխեթի են անվանում, թեև VII դարից անցել էր արդեն 12 դար:

Սահակ Ջորափորեցի եպիսկոպոսը, որը 678 թվականին՝ Իսրայել (եղիա՞) կաթողիկոսի տասնամյա իշխանությունից հետո (668-678թթ.) դարձավ Հայոց կաթողիկոս և աթոռակալեց 25-26 տարի՝ մինչև 703-704 թթ.<sup>3</sup>, ծնունդով Գուգարք աշխարհի<sup>4</sup> Ջորափոր գավառից էր և ցավով էր տեսնում, թե Բյուզանդիայի հովանավորությունը վայելող Վրաց եկեղեցին ինչպես էր աստիճանաբար քաղկեդոնական հայտարարում Գուգարքի հին հայկական լուսավորչական եկեղեցիները, և նրանց շուրջ համախմբված հայոց համայնքները ենթարկում կրոնական խտրականության: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ իր հյուրենի Գուգարքում ուժեղացնելու հակաքաղկեդոնական պայքարը և սատարելու Գուգարքի ու հարակից տարածքների հայ լուսավորչական համայնքներին: Ուստի իր աթոռակալության առաջին իսկ տարում՝ 678 թ., նա հանձնարարեց Թարգմանիչ-հունագետ Գրիգոր Ջորափորեցուն, որ նույնպես ծնունդով Ջորափոր գավառից էր՝ նույն ծննդավայրից, հունարենից Թարգմանել Հոռմի Սիղբեստրոս եպիսկոպոսի Վարքը կամ հայկաբան ոճով նորոգել Սիղբեստրոսի Վարքի V դարի առաջին կեսին կատարված հին հունաբան Թարգմանությունը, որը դժվար ընկալելի էր, եթե չսսենք՝ անմատչելի, նույնիսկ իր ժամանակի ուսյալ ընթերցողին<sup>5</sup>:

<sup>2</sup> Ն. Արոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, տե՛ս Երկեր, հ. Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Եր., 2006, էջ 356:

<sup>3</sup> Ստեփանոս Տարամնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, աշխ. Գ. Մանուկեանի. տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, երկու գրքով, Գիրք Բ., Եր., 2011, էջ 702:

<sup>4</sup> Ըստ «Աշխարհացոյցի»՝ Գուգարքը Մեծ Հայքի ԺԳ աշխարհն էր. «ի մտից Ուտիացոց. ունի գաւառս ինն. զՋորափոր, զԿողբափոր, զՄոբափոր, զՏաշիւ, զԹոնդու, զԿանկարս, զՋովախս Վերի, զԱրամահան, զԿալարչս: [...] Ունին արդ Վիրք համեալ ի Հայոց»։ տե՛ս Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յաւերածովք նախնեաց, Վեներտիկ, 1881, էջ 34-35:

<sup>5</sup> Տե՛ս ներկա հոդվածի 83-րդ ծանոթությունը:

Մեսրոպ վրդ. Տեր-Մովսեսյանի հրատարակած Վարքի հիշատակարանում կարդում ենք (Յառաջաբան, էջ ԺԷ)<sup>6</sup>. «Յառաջ քան զութուտասն ամ ի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդ զայդ Սովորատայ զեկեղեցական պատմութիւն, թարգմանեալ էր Աբասուն Գրիգորի Ձորոյփորեցոյ (հրամանաւ) ընդ փառաւորս յիշելոյ Ներսէհի վրաց իշխանի փեսային Կամսարականաց, զգիրս Պատմութեան վարուց Սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ. եւ կայր ի քարտիզի»: Իսկ նույն հիշատակարանը բուն Վարքի սկզբում (էջ 691-ի նախորդ էջում), ինչպէս նաև ձեռագրերում<sup>7</sup> «հրամանաւ» եղծված բառի փոխարեն ունեն «թարգմանի» ընթերցվածը, որից պարզվում է, որ Գրիգոր Ձորափորեցին ոչ թե վրաց իշխանի հրամանով է թարգմանել Վարքը, այլ եղել է նրա թարգմանը:

Որևէ վրաց իշխան, այն էլ քաղկեդոնականություն քարոզող վրաց եկեղեցուն ենթակա Գուգարքում, չէր կարող ինքնագլուխ նման գործ պատվիրել: Սիղբեստրոսի Վարքի ընտրությունը հուշում է, որ դա միաբնակություն դավանող հայ եկեղեցու հակազդեցությունն է ընդդեմ բյուզանդական քաղկեդոնականության, և որ այդ պայքարում Սահակ Ձորափորեցին հույս ուներ հենվել Հռոմի եկեղեցու աջակցության վրա, որի առաջին հրաշագործ Սիլվեստրոս եպիսկոպոսին էր նվիրված հիշյալ Վարքը:

Փիլոն Տիրակացին, ինչպէս կտեսնենք, Սովորատի Պատմությունը համառոտել է 696 թ., որից, ըստ հիշատակարանի, 18 տարի հետ գալով կստանանք դարձյալ 678 թիվը:

Դժվար չէ ենթադրել, որ երևելի կաթողիկոսը և ճանաչված թարգմանը ոչ միայն նույն ծննդավայրից էին, այլև տոհմակիցներ, և քանի որ կաթողիկոսը աթոռակալել է 678 թ., ապա այդ թարգմանությունը իր ազգական Գրիգորին հանձնարարած է եղել ոչ թե վրաց իշխանը՝ Կամսարականների փեսան, այլ ինքը՝ Սահակ Ձորափորեցին իր գահակալության առաջին տարում, որը ճշտիվ զուգահիշում է Սիղբեստրոսի Վարքի հայերեն թարգմանության թվականին: Իսկ Կամսարականների փեսա Ներսէհ իշխանը, փաստորեն, Հայոց Գուգարքի՝ Սոմխեթիի հայ իշխանն է, որ նպաստ մատուցելով Գրիգոր թարգմանին՝ իր աջակցությունն է ցուցաբերել միաբնակություն դավանող հայ եկեղեցուն, - ուրեմն ինքը ևս ոչ թե քաղկեդոնական էր, այլ միաբնակ քրիստոնյա:

Մի երրորդ հաստատումն 678 թվականի՝ մեզ ընձեռում է Անանիա Շիրակացու «Ժամանակագրությունը», որն ըստ վերջին ուսումնասիրությունների՝

<sup>6</sup> Սովորատայ Սեդաստիկոսի եկեղեցական պատմութիւն, թարգմանեաց Փիլոն Տիրակացի, եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ, թարգմանեալ Աբասուն Գրիգորի Ձորափորեցոյ, աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տեր Մովսեսյան, Վաղարշապատ, 1897:

<sup>7</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 1531, 1289 թ., թ. 206ա:

պատկանում է Փիլոն Տիրակացու գրչին<sup>8</sup>: Երկի վերջին մասը, որ վերնագրված է «Կայսերք Հոռովմոց թե որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործք գործեցան»<sup>9</sup>, բանասիրության մեջ այլ կերպ կոչված է «Գիրք կայսերաց»: Քննարկվող հարցի առթիվ ուշագրավ կռվան է մատուցում անվանի պատմաբան Ն. Ադոնցը, որ չէի կամենա զանց առնել. «Այս շրջանի կաթողիկոսների ժամանակն որոշելու համար հավաստի կռվան է Գրիգոր Մամիկոնյանի մահվան տարին: Ըստ «Կայսերաց գրքի»՝ Գրիգոր ընկավ Խազարաց արշավանքում Հայոց ՃլԳ թվին, Սահմի 10, այսինքն՝ 685 թ. հուլիսի 5-ին: Ասողիկը տալիս է ՃԼ, որ գրչական սխալ է, և հրատարակիչը կարող էր ուղղել, քանի որ նույն պատմագիրը Գրիգորի հաջորդի՝ Աշոտ պատրիկի իշխանությունը դնում է ՃԼԵ թվին: Գրիգորի մահը տեղի ունեցավ, ըստ Հովհաննես կաթողիկոսի, Սահակ Չորափորեցու 7-րդ տարին<sup>10</sup> (և ո՛չ 5-րդ, ինչպես Ասողիկի մոտ է), ուրեմն Սահակ գահակալել է 678 թվին»<sup>11</sup>: Այն, որ Գրիգոր Չորափորեցու թարգմանությունը 18 տարի շարունակ մնացել է մագաղաթի վրա («կայր ի քարտիսի») առանց բազմացման, արդեն իսկ նշանակում է, որ Վրաց եկեղեցին արգելել է Սիդբեստրոսի Վարքի տարածումը Գուգարքում, քանի որ այն աչքի էր ընկնում Հռոմեական եկեղեցու Սուրբ Աթոռի գերակայության և Կոստանդնուպոլսի աթոռի նկատմամբ քամահրանքով, որոնց հակամարտությունը դեռ կանդրադառնամ ստորև:

Գրիգոր Մամիկոնյանը զոհվեց խազարների դեմ մղված կռվում 685 թ., որին հաջորդեց Աշոտ պատրիկ Բագրատունին չորս տարով՝ 685-688 թթ.: Հաջորդ երկու Հայոց իշխանների մասին տեղեկություն է տալիս Ասողիկը. «Եւ ներսէ՛հ Կամսարական եկաց իշխան Հայոց ամս Դ: Ի սորա աւուրս պայծառանայր Գրիգորիս Արշարունեաց քորեպիսկոպոս փիլիսոփայական արուեստիւ, որ զընթերցուածոց մեկնութիւնն զարդարեաց (Ճիշտ է՝ շարադրեաց – Ա. Մ.) ի խնդրոյ ներսէ՛հի Կամսարականին: Եւ զկնի նորա, ի ՃԽ թուականին (= 691 թ. – Ա. Մ.) Սմբատ Բագրատունի Բիրատեան Հայոց իշխան եղեւ ամս Ի (20 տարի – Ա. Մ.)»<sup>12</sup>: Քանի որ արդեն ունենք հայ իշխանների շարքը Գրիգոր Մամիկոնյանից մինչև Սմբատ Բագրատունի ներառյալ՝ ըստ Ղևոնդի, Դրասխանակերտցու և Ասողիկի տվյալների, համեմատություն համար բերենք նույն շարքի վերաբերյալ վրացերեն «Պատմվածք պատիմոթին»-ից քաղկեդոնական գրված-

<sup>8</sup> Տե՛ս Զ. Բարթիկեան, Ա. Յակոբեան, Փիլոն Տիրակացին եւ իր ժամանակագրությունը. Մատենագիրք Հայոց, Ե. հ., է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 899-902:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 935-969:

<sup>10</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Վարդանեանի. տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԱ. հ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 415:

<sup>11</sup> Ն. Ադոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, էջ 357, ծանոթ. 1:

<sup>12</sup> Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 703:

քից<sup>13</sup>, որի հունարեն «Diegesis» և լատիներեն «De rebus Armeniis» վերնագրերով հայտնի հունարեն բնագիրը գրված է մոտ 700 թվականին: Այստեղ հիշատակված վերջին Հայոց իշխաններն են. «Համագասպ (Ամագասպ) կուրապալատը՝ 4 տարի, նրա եղբայր Գրիգորը (Մամիկոնյան – Ա. Մ.) 24 տարի, Աշոտ Բագրատունին՝ 3 տարի, Ներսես (Ներսե) Կամսարականը՝ 3 տարի, Սմբատ (Սումբատ) Բագրատունին (Բագրատունիանը – ուղղելի է՝ Բյուրատյան – Ա. Մ.) 12 տարի»<sup>14</sup>:

«Հայոց իշխանը երկրի գերագույն տիրակալն էր», – մատնանշում է Ա. Տեր-Ղևոնդյանը, – որին ենթարկվում էին բոլոր նախարարները, ինչպես նաև սպարապետն ու կաթողիկոսը: Նա դիվանագիտական հարաբերությունների մեջ էր մտնում և դաշինք կնքում արաբական խալիֆայության, Բյուզանդիայի և խազարների հետ: VII դարի երկրորդ կեսի գրեթե բոլոր իշխանները նախ ընդունվել էին Հայաստանի նախարարների կողմից և միայն հետագայում ստացել Բյուզանդիայի կայսեր կամ արաբ խալիֆայի հաստատումը: Այս ժամանակաշրջանում միայն Ներսես Կամսարականն էր, որ, ինչպես կտեսնենք, ուղղակի Հուստինիանոս Բ կայսեր կողմից նշանակվեց»<sup>15</sup>:

Գրիգոր Մամիկոնյանից հետո նախարարները Հայոց իշխան ընտրեցին Աշոտ Բագրատունուն 685 թ.: Նրա նստավայրն էր Կոզովիտ գավառի Դարույնք ամրոցը, որտեղ կառուցել էր մի շքեղ եկեղեցի: Անկախ տիրակալ լինելով նա հաշվետու չէր ո՛չ խալիֆայությանը, ո՛չ էլ Բյուզանդիային, և այս հանգամանքը գրգռում էր երկու անհանդուրժող հզոր հարևաններին:

Բյուզանդիայի Հուստինիանոս Բ կայսեր գահակալությանը (685 թ. սեպտեմբեր) Հայ եկեղեցու և իշխանների համար սկսվում է բյուզանդական քաղկեդոնականության սանձարձակ նկրտումների մի բախտորոշ ժամանակաշրջան: Քաղաքական հեռատեսությունից զուրկ Հուստինիանոս Բ կայսրը, արհամարհելով արաբ և այլ ցեղերի ահագնացող արշավանքներն ու հաճախակի բախումները, որոնք ահավոր վտանգ էին նաև կայսրության համար, զբաղված էր կրոնական պառակտումներ ու խարդավանքներ հրահրելով: 685 թ. միաժամանակ գահ բարձրացան Աբդ ալ-Մալիքը և Հուստինիանոս Բ կայսրը, որոնք գահակալության հենց սկզբում խաղաղության տասնամյա դաշինք կնքեցին, որը Հուստինիանոսն ուղղեց անկախ Հայաստանի ըմբոստ տիրակալ Աշոտ Բագրատունու դեմ: Ինչպես հաղորդում է Ղևոնդ պատմիչը «...յերկրորդում ամի թագաւորութեանն Յուստիանոսի կայսեր, և յիշխանութեանն Աշոտի պատրկի», վերջինիս ընկճելու համար կայսերական զորքը մտավ Հայաստան,

<sup>13</sup> Վրացերեն վերնագրում հիշված «Պատմություն» հայերեն բառը թարգմանիչը պահպանել է վրացերեն լեզվում երևի ցույց տալու համար, որ այն թարգմանվել է հայերենից, և միայն մի մասն է հայերեն բնագրի:

<sup>14</sup> Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Կ. Ա., Եր., 1934, էջ 79:

<sup>15</sup> Հայ ժողովրդի պատմություն, Կ. Բ., Եր., 1984, էջ 317:

ավերեց երկիրը, կործանեց գեղեցկահարմար շինությունները և վերադարձավ ավարառությունը<sup>16</sup> : Այս մասին գրում է նաև Ասողիկը. «Իսկ Յուստինոսն ի յերրորդ<sup>17</sup> ամի թագաւորութեանն իւրոյ զար սաստիկ առաքեաց ի Հայս. եւ հրով եւ գերութեամբ քանդեցին գաւառս ԻՆ (25), եւ ԸՌ (8 հազար) երգ գերեալ՝ վաճառեցին: Եւ ի միւս ամին այլ զար առաքեաց ԽՌ (40)»<sup>18</sup> :

Հուստինիանոսի չորրորդ տարում՝ 688 թ., արաբները ներխուժեցին Արաքսի կողմից Հայաստան՝ թերևս ոչ առանց Հուստինիանոսի դրոման, և ասպատակեցին Խրամ, Զուղա և Խոշակունիք: Հայոց իշխան Աշոտ Բագրատունին իր նստավայր Դարույնքից գորքով շտապ հասավ Արաքսի հովիտ և կտորեց ասպատակողներին, իսկ մյուսները փախուստի դիմեցին. կռվում ստացած ծանր վերքից Հայոց իշխանը վախճանվեց, և նրա մարմինը փառքով ամփոփվեց իր Դարույնք ամրոցում<sup>19</sup> :

Նույն չորրորդ տարում 30 հազարանոց ծանր զորքով Հայաստան եկավ ինքը՝ Հուստինիանոս կայսրը. «Իսկ ի գալ չորրորդ ամին Յուստինոսն ինքն խաղացեալ զարու ծանու՝ եկն ի կողմն մի Հայոց, ի լեառն, որ կոչի Արարտակ» – ակնհայտ է, որ եկավ Կոզովիտ և Դարույնք ամրոց՝ Մասիս լեռան թիկունքում, առանց որևէ դիմադրության, քանի որ քաջարի Բագրատունյաց իշխանն զոհվել էր, – «եւ յերիս բաժանէ զգաւրս իւր, առաքէ ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս. եւ կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացս այսոցիկ. եւ ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա: Իսկ նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ եւ զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս եւ զկաթողիկոսն Հայոց զՄահակ հանդերձ Ե եպիսկոպոսաւք արգելեալ առ ինքն. եւ զոմանս յիշխանացն արքունատուր պատարագաւք պատուեալ՝ կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսէ՛հ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց (ձ. Կապուտուր – Ա. Մ.) Հայոց իշխան<sup>20</sup>, զՎարագ-Տրդատ<sup>21</sup> պատրիկ էքսարխոս, որ էր երկրորդ թագա-

<sup>16</sup> Պատմաբանություններն **Ղեւոնդեայ մեծի վարդապետի** հայոց, աշխ. Գ. Տէր-Վարդանեանի. տե՛ս Մատենագիրք Հայոց, Զ. հ. Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 744-745:

<sup>17</sup> «Ներորդ» գրչական սխալ է, որ Ն. Ադոնցը իրավամբ ուղղում է «երկրորդ ամի», քանի որ հաջորդ արշավանքը դեպի Հայաստան տեղի է ունենում «ի միւս ամին», այսինքն՝ երրորդ տարում. «այապ «ի գալ չորրորդ ամի», ինքն՝ կայսրը, եկավ». տե՛ս Ն. Ադոնց, *Քննություն Մովսես Կաղանկատվացու* [«Աղուանից պատմություն» երկրորդ գիրքը], Երկեր, հ. Բ, էջ 420, ծանոթ. 4:

<sup>18</sup> **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական, էջ 702:

<sup>19</sup> Պատմաբանություններն **Ղեւոնդեայ մեծի վարդապետի** հայոց, էջ 745:

<sup>20</sup> Հավանորեն Ասողիկի այս վկայությունը նկատի առնելով՝ Ն. Ադոնցը կարծում է, թե «Ապիհիպատ» կամ «Ապուհիպատ» տիտղոսը Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսյանն է ընծայել Ներսեն Կամսարականին Համառոտ Սոկրատի վերջին հիշատակարանում. տե՛ս Ն. Ադոնց, *Փոքր Սոկրատի հեղինակը*, էջ 359: Այդ «Ապիհիպատ»-ը առկա է նաև Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 1518 ձեռագիր ժողովածուում (գրված 1594-1600 թթ.) Համառոտ Սոկրատի հիշատակարանում և այլուր: Ըստ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսյանի՝ Ներսեն Կամսարականը «Ապիհիպատ» փորագրել է տվել Թալին գյուղում իր կառու-

ւորին՝ Աղուանից իշխան, եւ լՌ (30 հազար) զաւր աւգնական իշխանացն, եւ ինքն ի Կոստանդնուպոլիս դարձաւ»<sup>22</sup>:

Ասողիկը ճիշտ է նկատել՝ կայսրը արքունատուր պարգևներով և պատրկութեան փուշ կոչումներով պատրու՞ խաբու՞մ էր իշխաններին:

Այսպիսով, Հուստինիանոսը, առաջին անգամ խախտելով ընտրութեան կարգը և առանց հայ նախարարների կամքը հարցնելու, «Հայոց իշխան» նշանակեց Շիրակա տեր Ներսէ՛հ Կամսարականին՝ անարգելով զո՛հված Աշոտ պատրիկի հիշատակը: Դա անարգանք էր նաև Ներսէ՛հ Կամսարականի կողմից, և հատուցումը շատ չուշացավ: Առիթ ստեղծողը դարձյալ ամբարիշտ կայսրն էր: Մինչ Հուստինիանոսը իր մոտ արգելանքի տակ գտնվող Սահակ կաթողիկոսին և հինգ եպիսկոպոսներին Հայոց իշխան Ներսէ՛հ Կամսարականի հըու համաձայնութեամբ Կ. Պոլիս գերի տանելով՝ ստիպում էր ընդունել Քրիստոսի երկու բնութեան քաղկեդոնական հավատը, 691 թ. արաբները, օգտվելով նրանից, որ Հուստինիանոսը միակողմանի չեղյալ համարեց իրենց հետ կնքած տասնամյա դաշինքը, Կեսարիայի մոտերքում ջարդեցին կայսերական զորքը:

Սմբատ Բագրատունի Բյուրատյանը (Բյուրատի որդին) արաբների հաղթութեան լուրն առնելով, իր զորական ուժով տապալեց բյուզանդամոլ Ներսէ՛հ պատրիկին և իրեն հռչակելով Հայոց իշխան, 691 թվականին (ըստ Ասողիկի՝ Հայոց ճն – 140 թ.) Հայաստանը դաշնակից հայտարարեց խալիֆաթին: Խալիֆ Աբդ ալ-Մալիքը Հիշրի 73 թվին<sup>23</sup> իր եղբայր Մահմեդին նշանակեց Հայաստանի ոստիկան: Ասողիկի հաղորդմամբ, Սմբատ Բագրատունին իշխեց 20 տարի, իսկ ըստ վրաց աղբյուրի՝ 12 տարի: VIII դարի բյուզանդական ժամանակագիր Թեոփանես Խոստովանողը այս ամենը ներկայացնում է հակառակ տեսանկյունից. Հուստինիանոսի յոթերորդ տարում (691թ.) արաբները ծովափնյա Սեբաստուպոլիսի մոտ ջարդեցին Հուստինիանոսի զինած և անվանակոչած՝ սկլավոնների «արտակարգ զորքը», ինչպես և բյուզանդական հեծելազորը, իսկ հաջորդ տարի (692թ.) «Հայաստանի պատրիկ Սմբատը, իմանալով հոռմայեցիների (իմա՝ բյուզանդացիների – Ա. Մ.) պարտության մասին, Հայաստանը արաբներին հանձնեց»<sup>24</sup>: Այսպես, Սմբատ Բագրատունին վրեժխնդիր

ցած մի մատուռի արձանագրության մեջ՝ իր անվան հետ. տե՛ս **Սովորատյ Մոլաստիկոսի Եկեղեցական պատմություն**, Յառաջաբան, էջ 90:

<sup>21</sup> Ասողիկի մոտ՝ «Վարագդատ» (ձ. Վազդատ): Մովսես Կաղանկատվացին թույլ է տալիս նշտել այստեղ աղետոված Աղվանից իշխանի անունը՝ «Վարագ-Տրդատ». տե՛ս **Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի**, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Եր., 1983, գիրք Բ, գլ. 12, էջ 231:

<sup>22</sup> **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական, էջ 703:

<sup>23</sup> Ըստ Ն. Արմենցի՝ 692 թ. մայիսի 23-ից մինչև 693 թ. մայիսի 13-ը. տե՛ս *Քննություն Մովսես Կաղանկատվացու* [«Աղուանից պատմության» երկրորդ գիրքը], էջ 422:

<sup>24</sup> **Թեոփանես Խոստովանող**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Բարթիկյանի, Եր., 1983, էջ 78:

եղավ քաջարի Աշոտ Բագրատունու հիշատակն անարգելու և Հայոց Սահակ կաթողիկոսին հինգ եպիսկոպոսների հետ Կ. Պոլիս գերի տանելու համար:

Ինչպես տեսնում ենք, Փիլոն Տիրակացին ոչ թե «գործուղված է եղել» Կ. Պոլիս՝ ներսեհ Կամսարականի կողմից՝ Սոկրատի «եկեղեցական պատմությունը» թարգմանելու համար<sup>25</sup>, այլ, Սահակ կաթողիկոսի հետ հինգ եպիսկոպոսների թվում գերի է տարվել Կ. Պոլիս՝ որպես հունարենի գիտակ՝ դավանաբանական վեճերը թարգմանելու համար: Ն. Ադոնցը այս փաստը կապում է 692 թ. Կ. Պոլսում հրավիրված Տրուլի եկեղեցական ժողովի հետ, նշելով, սակայն, որ մասնակիցների ցուցակում Հայոց կաթողիկոսի և նրա հետ եղած եպիսկոպոսների ստորագրությունները չկան<sup>26</sup>:

Կաթողիկոսը և նրան ուղեկցող հոգևոր դասը թերևս զգուշավոր պատրվակներով առկախել են իրենց որոշումը քաղկեդոնականություն ընդունելու առթիվ. դրան նպաստեցին Հայաստանում տեղի ունեցած անցքերը:

Արաբական խալիֆայության հարվածների տակ նախկին Արևելահռոմեական տիեզերական կայսրությունից VII դարի վերջին Բյուզանդիայի կազմում (որ կոչվում էր այժմ Ռոմանիա) մնացել էին հազիվ միայն Փոքր Ասիան և Հունաստանը: Հռոմայեցիների (հայկական աղբյուրներում Հռոմոնց) տերության երբեմնի տիեզերական փառքի վկայություններն էին սոսկ Կոստանդնուպոլսի Տիեզերական մայրաքաղաք հորջորջումը և V դարի առաջին կեսի եկեղեցական պատմագիր Սոկրատ Աքոլաստիկոսի հունարեն «եկեղեցական պատմությունը», որի մեջ հիշատակվում էր Կ. Պոլսին Կոստանդին կայսեր՝ դեռ 324 թ. շնորհած «երկրորդ Հռոմ» կամ «նոր Հռոմ» պատվանունը. դրանով իսկ վավերացվում էր Ռոմանիայի պատմության փառավոր սկիզբը, իսկ Սոկրատը ճանաչվում էր նրա առաջին պատմագիր: Ուստի Սոկրատի Պատմությունը շատ հարգի էր Բյուզանդիայում հռոմայեցիների երկրում, իսկ նրա թարգմանությունը, որևէ երկրի լեզվով, մոլագար Հուստինիանոս Բ կայսեր համար համազոր էր Ռոմանիայի գերիշխանությունը ճանաչելուն: Այս պատճառով նա հարկադրեց կաթողիկոս Սահակ Զորափորեցուն, որը իր հինգ եպիսկոպոսների հետ գերի էր տարվել Կ. Պոլիս՝ մասնակցելու 692 թվի Տրուլի քաղկեդոնական դավանաբանական ժողովին, որպեսզի հունագետ թարգման Փիլոն Տիրակացին պատանդ մնա Կ. Պոլսում՝ Սոկրատի Պատմությունը թարգմանելու, և թույլ տվեց կաթողիկոսին վերադառնալ Հայաստան՝ խափանելու «ինքնակոչ» հայոց իշխան Սմբատ Բագրատունու դաշինքը արաբ խալիֆ Աբդ ալ-Մալիքի հետ:

Առաջին գործը, որ պետք է հոգար Փիլոնը Կ. Պոլսում նախքան թարգմանության անցնելը, «քարտ և մագաղաթ» հայթայթելն էր: Ծանոթանալով Սոկ-

<sup>25</sup> Ա. Սահակյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրի պատմություն, Եր., 2015, էջ 133:

<sup>26</sup> Ն. Ադոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, էջ 356:



րատի «Եկեղեցական պատմություն» հունարեն բնագրին՝ նա համոզվեց, որ այդ ծավալի գործն ամբողջությամբ թարգմանելու համար հնարավոր չէր օտարության մեջ բավարար քանակով մագաղաթ հայթայթել՝ սակավության պատճառով: Այս առթիվ Սովորատի հայերեն թարգմանության հիշատակարանում, որի մանրամասն քննությանը կանցնենք ստորև, կարդում ենք. «Թարգմանեաց Փիլոն Տիրակացի առաջին ձեռնարկութեամբ զգիրսն զայս մասնաւոր ծայրաքաղ [արարեալ – Ա. Մ.] ի Սովորատայ Եկեղեցական պատմութենէն. թողեալ զինքնախաւսութիւնս և զթուղթս այլոց, և զճառս յաղագս նուազութեան քարտի և մագաղաթի եղելոյ յաւտարութեան»<sup>27</sup>:

Ուստի և Փիլոնը, նախքան թարգմանության անցնելը, մագաղաթի սակավության պատճառով ստիպված էր «առաջին ձեռնարկութեամբ», այսինքն՝ առաջին գործով, մասնակի կրճատել Սովորատի հունարեն բնագիրը՝ բաց թողնելով «ինքնախաւսութիւնս» (թերևս՝ հեղինակային խոսքերը – Ա. Մ.), «թուղթս այլոց և ճառս» (այլոց նամակները և ճառերը): Ըստ իս, «առաջին ձեռնարկութեամբ» ծայրաքաղ անելու միտքը Փիլոն Տիրակացին ընդօրինակել է Սովորատի Պատմության երկրորդ գրքի առաջաբանի հայերեն թարգմանությունից, որտեղ նույնպես հույն պատմագիրը իր Պատմության առաջին և երկրորդ գրքերում հունարեն համառոտ շարադրել է Ռուփինոսի հռովմայերեն (իմա՝ լատիներեն) «Եկեղեցական պատմությունը»: Այս առիթով Սովորատը մատնանշում է. «այլ և այս գիտելի է, զի ոչ եղաք յառաջնում ստորաստութեանն զնգովականն Արիոսի. զի և ոչ զթագաւորին զթուղթս, այլ զայն միայն մերկ զգործսն յաղագս ոչ բազմաբան լինելոյ պատմութեանն»<sup>28</sup>: Փիլոնը «ստորաստութիւն» ինքնահնար արտասովոր բառը պատճենել է *ὑποχώρεσις* հունարեն գոյականից, որը շատ իմաստների հետ նշանակում է նաև «ձեռնարկություն, նախաձեռնություն, նախապատրաստություն»<sup>29</sup>: Ըստ այսմ, Սովորատը «առաջին ձեռնարկութեան» (նախապատրաստության) մեջ ոչ Արիոսի բանադրանքն է դրել, ոչ էլ թագավորի թղթերը, այլ լոկ միայն գործերը (իրադարձությունները)՝ պատմության մեջ շատախոս շիինելու և ընթերցողներին ձանձրույթ չպատճառելու համար: Իսկ Փիլոնը, հետևելով Սովորատին, կրճատել է ոչ էական մանրամասները՝ մագաղաթի սակավության պատճառով: Շարունակության մեջ Սովորատը մի անգամ ևս տեղեկացնում է. «Սակս այսորիկ որքան կարեւոր համարեցաք, յետ այսորիկ ի ստորասացութեան եղաք: Եւ զայս յառաջնումն արարեալ գիրս, և յորում յետ ձեռնարկութեանն, ասեմ զի և յերկրորդիս առնել փութասցուք»<sup>30</sup>, այսինքն՝ Ռուփինոսից քաղել, ընտրել է

<sup>27</sup> «Առշալոյս Աբարատեան», օրագիր Զմիտնիայ, 23 նոյեմբերի 1868, թիվ 845:

<sup>28</sup> Մեծ Սովորատ, գիրք Բ, գլ. Ա, էջ 116:

<sup>29</sup> Հմմտ. «ստորաստիւն» բառի բացատրությունը՝ Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիւրմելեան, Հ. Մ. Ազեղեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 750:

<sup>30</sup> Մեծ Սովորատ, գիրք Բ, գլ. Ա, էջ 116:

ինչ-որ կարևոր է համարել (հունարեն թարգմանելու համար): Համառոտման երկու դեպքն էլ Փիլոնը շատ դիպուկ անվանում է «ծայրաքաղ առնել», որ գրաբարում երկակի իմաստ ունի՝ թե՛ «այսուայն տեղից կրճատել» և թե՛ «կարևորը քաղել, ընտրել»<sup>31</sup>, ինչպես Սոկրատն է երկակի համառոտել: Այսպիսով Սոկրատը ծայրաքաղ է արել Ռուփինոսի լատիներեն «եկեղեցական պատմությունը»՝ «յաղագս ոչ բազմաբան լինելոյ պատմութեանն», իսկ Փիլոնը, հետևելով Սոկրատին, ծայրաքաղ է արել նրա «եկեղեցական պատմությունը»՝ «յաղագս նուազութեան քարտի և մագաղաթի յաւտարութեան»: Այլ կերպ՝ Փիլոնի առաջին գործն է եղել մասնակի համառոտել հունարեն բնագիրը, որից հետո միայն ձեռնամուխ է եղել հայերեն թարգմանության:

Սակայն «առաջին ձեռնարկութեամբ» ծայրաքաղ անելու միտքը բանասիրության մեջ տեղիք է տվել զանազան արտառոց «տարակարծութեանց», և «առաջին ձեռնարկությունից» առաջ է եկել և «երկրորդ ձեռնարկությունը»: Անգլիացի հայագետ Ֆ. Կոնիբերը «առաջին ձեռնարկութիւն» ասելով հասկացել է Սոկրատի ամբողջական թարգմանությունը, իսկ «երկրորդ ձեռնարկութիւն» է անվանում Փիլոնի համառոտ թարգմանությունը: Ճիշտ նույն կերպ Ն. Ադոնցը «առաջին ձեռնարկութեան» տակ հասկանում է Սոկրատի ամբողջական հայերեն «եկեղեցական պատմությունը», որ թարգմանել է Փիլոն Տիրակացին, իսկ «երկրորդ ձեռնարկութիւն» է համարում Սոկրատի համառոտ թարգմանությունը, որ նա վերագրում է ոմն Հակոբ Ուռհայեցու: Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ՝ 641 թվականի տակ հանդիպելով մի անակնկալ զուգահեռության՝ «Փիլոն Տիրակացի: Յակոբ Ուռհայեցի արար զնոր թարգմանութիւն», անվանի բանասեր պատմաբանը իրեն ոչ հատուկ հապճեպություն է գրակացնում է. «Հազիվ թե բացատրության պետք կա: Ժամանակագիրը հայտնում է, որ այսինչ թվին Փիլոն Տիրակացին թարգմանել է Սոկրատը և հիշում ի դեպ, որ Հակոբ Ուռհայեցին արել է երկրորդ թարգմանությունը, այսինքն՝ Փոքր Սոկրատը: Մնում է պարզել, թե ո՞վ է Հակոբ Ուռհայեցին»<sup>32</sup> (ընդգծված բառերը Ադոնցի հավելածն են): Եվ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ պատմաբանը մատնացույց է անում «մի Յակոբ գիտնական վարդապետ, որ կնքել է իր մահականացուն խորին ծերության մեջ Ուռհայում, Հայոց 534=1085 թվին»: Բայց Ադոնցի տեսակետը միանգամայն խնդրահարույց է, քանի որ Մատթեոս Ուռհայեցին հիշյալ Հակոբին անվանում է Քարափնեցի և Սանահնեցի<sup>33</sup>, իսկ ապրած ժամանակի հարցին Ն. Ադոնցը առհասարակ կարևորություն չի տալիս՝ հակառակ իր սովորական

<sup>31</sup> Հ. Գ. Ալեախբեան, Հ. Խ. Սիււմելեան, Հ. Մ. Ալգեբեան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Բ. առաջին, Վեներիկ, 1836, էջ 1006:

<sup>32</sup> Ն. Ադոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, էջ 353:

<sup>33</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 161:

բժախնդրություն: Արդյունքում Փիլոնի գործակից և ժամանակակից Հակոբ Ուռհայեցին ոչ թե Մատթեոս Ուռհայեցու մատնանշած Հակոբ Քարափնեցի կամ Սանահնեցի կոչվածն է, որ ապրել է Փիլոնից շորս դար հետո և ոչ մի կերպ չի առնչվում Սովորատի Պատմության հետ, այլ իրականում Այրիվանեցու հիշատակածը՝ իսկապես Փիլոնին ժամանակակից Հակոբ Եղեսացին կամ Ուռհայեցին՝ ազգով ասորի, որ նորոգել է ասորերեն լեզուն և նոր թարգմանել ասորերեն Սուրբ Գիրքը: Սրա մասին հիշատակում է Միքայել Ասորին<sup>34</sup>, դրա համար էլ թերևս Հակովբ Ուռհայեցի անունով մտել է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ:

Սրան հակառակ, Ա. Սահակյանը կարծում է, որ նշված երկու հիշատակարանները պատկանում են Թովմա դպրին, որը Փիլոնի վերադարձից հետո Ներսես Կամսարականի նստավայր Շիրակում մաքրագրել է Սովորատի թարգմանությունը Միղբեստրոսի Վարքի հետ նույն ձևագրում, Փիլոնի ներկայությունը՝ «հիշատակագրելով թե՛ Սովորատի, թե՛ Սեղբեստրոսի վարքի թարգմանիչներին գործերն ու դրանց հանգամանքները»<sup>35</sup>: Ըստ այսմ, Ա. Սահակյանը «առաջին ձեռնարկությունը» ասելով հասկացել է հեղինակի «սևագիրը», որը «երկրորդ ձեռնարկությամբ» միայն պետք է մաքրագրվեր և մատուցվեր իբրև գրիչների ընդօրինակման համար պատրաստի գաղափար ձեռագիր<sup>36</sup>: Եթե մատենագրության մեջ յուրաքանչյուր հեղինակի նորավարտ գործն իրոք կոչվեր «առաջին ձեռնարկություն», ապա դարերի ընթացքում կունենայինք անհամար թվով գրչագրեր, որոնց հիշատակարաններում գրիչներն իրենց մաքրագիր ձեռագրերը նույն իրավունքով պիտի կոչեին «երկրորդ ձեռնարկություն»: Նման բան չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ «առաջին ձեռնարկություն» տվյալ պարագայում բոլորովին չի նշանակում սևագիր: Ն. Ադոնցը գտնում է, որ Փիլոնի երկու հիշատակարաններն էլ շարագրված են երրորդ դեմքով, ուստի նրա գրչին չեն պատկանում, այլ ուշ ժամանակի մի անձանոթ գրիչ խմբագրել է դրանք ամփոփ ձևով և վերագրել Փիլոնին<sup>37</sup>:

Այդ հիշատակարաններից առաջինը հետևյալն է՝

«Յամի վեց հազար երրորդի երկերիւր երրորդի չոր[ը]որդի կենցաղումս անցաւորի որպէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպոլսի: Յեւթն հարիւրերորդի չորրորդի Քրիստոսի գալստեանն, և ի հարիւր քառասուն և ի չորս թուականին. ի յիններորդումն Ընդիքտիոնին յառաջնում ամի թագաւորութեանն Եր[ը]որդ Աւոնի Ինքնակալի աւգոստոսի:

<sup>34</sup> Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորաց պատրիարքի, համեալ ի հնագոյն գրչագրէ, Երուսաղէմ, 1871, էջ 3-4:

<sup>35</sup> Տէ՛ս Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 133:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Ն. Ադոնց, Փոքր Սովորատի հեղինակը, էջ 355:

Թարգմանեաց Փիլոն Տիրակացի առաջին ձեռնարկութեամբ զգիրսն զայս մասնաւոր ծայրաքաղ [արարեալ – Ա. Մ.] ի Սոկրատայ եկեղեցական պատմութենէն. թողեալ զինքնախաւսութիւնս և զթուղթս այլոց, և զճառս յաղագս նուագութեան քարտի և մագաղաթի եղելոյ յաւտարութեան»<sup>38</sup> :

Մինչև այժմ ուսումնասիրողները առանձնակի նշանակութիւն չեն տվել այս վավերագրի սկզբում տրված թվականներին. դրանց մասնակի անդրադարձել է Ն. Ադոնցը՝ մատնանշելով, սակայն, որ Աշխարհի Արարչագործութեան Ալեքսանդրյան տոմարը և Քրիստոսի Գալստյան թվականը ուշ է գործածվել նույնիսկ եվրոպական ժամանակագրութեան մեջ, և որ դրանք հետագայում պատահաբար են հայտնվել Փիլոնին վերագրվող հիշատակարանում: «Փիլոնի բուն հիշատակարանները չեն պահված, – մատնանշում է պատմաբանը, – այլ հետին գրիչներից մեկը ամփոփել է նրանց բովանդակութիւնը, և իր կողմէն ավելացրել է Քրիստոսի Գալստյան թվականը Ալեքսանդրյան տոմարով, հակառակ Փիլոնի գործածած Կոստանդնուպոլսի տոմարի»<sup>39</sup> : Անձանոթ գրիչը Ալեքսանդրյան տոմարով (5500 տարի) ստացել է Քրիստոսի Գալստյան 704 թվականը, որը ըստ Ադոնցի պետք է լիներ 696՝ Կոստանդնուպոլսի 5508 տոմարի դեպքում: Իմ մեկնաբանումը միանգամայն այլ է մինչ այժմ տրված բոլոր բացատրութիւններից: Ըստ իս, դա ոչ թե Փիլոնի հիշատակարանն է, այլ Բյուզանդիայում ընդունված վաղ միջնադարյան գրադարանային գործի մի հագվազուտ վկայական կամ հավաստագիր, որին կցվել է նաև տեղեկանք՝ բնագրի համեմատ թարգմանչի թույլ տված էական շեղումների մասին: Կ. Պոլսի գրադարանում Սոկրատի թարգմանութիւնն ավարտելու առթիվ գրադարանի տեսուչը, ընդունված կարգի համաձայն, Փիլոն Տիրակացուն հանձնել է հունարեն հավաստագիր առ այն, որ նա Սոկրատի թարգմանութիւնն ավարտել է 695 թ.՝ տարեթիվը նշելով Բյուզանդիայում ընդունված Աշխարհի Արարչագործութեան և Քրիստոսի Գալստյան (ոչ թե Հայտնութեան – Ա. Մ.) տոմարներով, որին հաջորդում է Հայոց 144 (695) թվականը (նշվում էր այն երկրի տոմարը, որտեղից ժամանել էր գրադարանի այցելուն), ինչպես և Ինդիկտիոնի իններորդ տարում (դարձյալ 695 թ.) Լևոն Բ ինքնակալ Օգոստոս կայսեր գահակալութեան առաջին տարին:

Յուրաքանչյուր պաշտոնական թուղթ կամ իրադարձութիւն թվագրելիս պարտադիր նշվում էր իշխող բյուզանդական կայսեր գահակալութեան տարին՝ Ինդիկտիոնի տվյալ տարվա հաշվարկով: Ինդիկտիոնը հունարեն Զատիկական ժամանակագրութեան մեջ ամրագրված՝ զլիսահարկի 15-ամյա շրջափուլ էր,

<sup>38</sup> Հիշատակարանը բերում եմ ըստ՝ «Արշալոյս Արարատեան», օրագիր Զմիտնիայ, 23 նոյեմբերի 1868, թիվ 845, որն ավելի անաղարտ է պահպանել Փիլոնի հիշատակարանը, քան Մեսրոպ վարդապետի «Յառաջաբանում» (էջ Ժէ) տպագրված տեխտը ըստ Երուսաղեմի օրինակի:

<sup>39</sup> Ն. Ադոնց, Փոքր Սոկրատի հեղինակը, էջ 355:

որով պատմական ժամանակաշրջանը դիտվում էր իբրև 15-ամյա սերունդների հարածուն շղթա՝ սկիզբը հաշվելով Կոստանդինոս Ա կայսեր Օգոստոս ինքնակալ հռչակվելու առաջին տարուց՝ 312/3 թվականի մարտի 21-ից: Այսպես՝ Լևոն Բ ինքնակալ Օգոստոս կայսեր գահակալության առաջին տարին դրված է Ինդիկտիոնի իններորդ տարում՝ 311+ 25 x 15+ 9 տարի = 695 թ.:

Հակառակ Ն. Ադոնցի դիտողության, թե «Քրիստոսի Գալստյան թվականը գործածական չէր ոչ միայն Փիլոնի ժամանակ, այլ և հետագա դարերում»<sup>40</sup>, այժմ, Թեոփանես Խոստովանողի հունարեն *Chronographia* (ժամանակագրություն) պատմական երկը ներգրավելով, ցույց կտամ, որ մեր վավերագրում ոչ մի թվային աղավաղում չկա:

695 թվականի հայերեն վկայականում պահպանված Տիեզերական մայրաքաղաք Կոստանդնուպոլսի Սուրբ Սոփիա Մեծ եկեղեցու տոմարի և բյուզանդական ժամանակագիր Թեոփանես Խոստովանողի օգտագործած տոմարի բաղդատումից բխում են կարևոր տոմարային և պատմական եզրահանգումներ, որոնք առաջին անգամ են ներկայացվում հայ և օտարագրի բյուզանդագետների ուշագրությունը: Հիրավի, զարմանքի արժանի է տարեթվերի այն հարաբերակցությունը, որ առկա է միմյանց հետ ոչ մի կապ չունեցող երկու վաղեմի գրավոր աղբյուրներում:

Թեոփանեսի ժամանակագրությունը հաստատում է, որ մեր ձեռքը հասած Կ. Պոլսի գրադարանի հայերեն վկայականում նշված թվականները միանգամայն համերաշխ են VII դարավերջի բյուզանդական պաշտոնական ժամանակագրությանը: Մեր վկայականում այդ ժամանակագրությունը կոչված է՝ «Տիեզերական մայրաքաղաք Կոստանդնուպոլսի Սուրբ Սոփիա առաջ եկեղեցու կենցաղում անցաւորի ժամանակագրութիւն»: Հունարեն հավաստագիրը կամ վկայականը պարունակել է իսկական որոգայթ՝ բյուզանդական քաղկեդոնիկ ոգով: Աշխարհի Արարչագործության ոչ մի ժամանակագրության մեջ չի նշվում «կենցաղում անցաւորի» արտահայտությունը: Ըստ իս, այս բառերը հունարեն վկայականում վերաբերել են Քրիստոսին: Քանի որ Բյուզանդիայում, քաղկեդոնական ուսմունքի համաձայն, Քրիստոս ուներ երկու բնություն՝ աստվածային և մարդկային, ուստի, Մարիամ Կույսից ծնվելով, Քրիստոս դարձավ «կենցաղում անցաւոր», այն է՝ սովորական մահկանացու:

Ըստ այսմ, Քրիստոսի Գալստյան 704 թվականը հունարենում կոչվել է «կենցաղում անցաւոր Քրիստոսի Գալստեան տարի»: Հավաստագիրը կամ վկայականը հայերեն թարգմանելիս, խույս տալով քաղկեդոնական որոգայթից, Փիլոնը «յեւթն հարիւրերորդի չորրորդի կենցաղում անցաւոր Քրիստոսի Գալստեանն» արտահայտությունից «կենցաղում անցաւոր» բառերը բարձրացրել է վերև՝ «Յամի վեց հազար երրորդի երկերիւ երրորդի չոր[ւ]որդի

<sup>40</sup> Նույն տեղում:

կենցաղումն անցաւորի ժամանակագրութիւն»): Այս վկայականից որոշ ուսումնասիրողներ հանիրավի եզրակացրել են, թէ թարգմանիչը Կ. Պոլսում եղած ժամանակ քաղկեդոնականութիւնն է ընդունել:

Փաստորեն, Սուրբ Սոփիա եկեղեցու և Թեոփանեսի ժամանակագրութիւնները միանման ընդունում են Աշխարհի Արարչագործութեան միայն Ալեքսանդրյան տոմարը, որ տևել է 5500 տարի – Թեոփանեսի մոտ Աշխարհի Արարչագործութեան 6188-րդ տարին Քրիստոսի Մարդեղութեան 688 թվականն է<sup>41</sup> 6188–688= 5500, նույն կերպ էլ հայերեն վկայականում առկա Սուրբ Սոփիայի ժամանակագրութեան 6204-րդ տարին Քրիստոսի Գալստյան (ոչ թէ Հայաճառքյան) 704 թվականն է՝ 6204–704= 5500: Ուրեմն, երկուսի հիմքն էլ Ալեքսանդրյան տոմարն է, ոչ թէ ինչ-որ այլ «Կոստանդնուպոլսի տոմար»:

Հետաքրքիր զուգահեռություններ թե՛ Կ. Պոլսի գրադարանի հայերեն վկայականը, և թե՛ հույն Թեոփանես Խոստովանողը՝ իբրև VII դարավերջի ուշագրավ իրադարձություն, նշում են Բյուզանդիայի Լեոն կամ Լեոնտիոս կայսեր գահակալության առաջին տարին<sup>42</sup>, որ ըստ վկայականի, տեղի է ունեցել «յիններորդում Ընդիքտիոնի», այն է՝ հռոմեական Տիրոջ տարվա (Anno Domini) 695 թվականին, իսկ ըստ Թեոփանեսի՝ հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր առաջին տարին է Քրիստոսի Մարդեղութեան 688 թվականը<sup>43</sup>: Հետևապես Բյուզանդական տոմարով Քրիստոսի Գալստյան 688 թվականը զուգահեռվում և նույնանում է հռոմեական 695 թվականին:

Ինչ վերաբերում է Քրիստոսի Մարդեղութեան (իմա՝ Հայտնութեան) 688 թվականի և Քրիստոսի Գալստյան 704 թվականի տարբերությունը, որ կազմում է 16 տարի (նույն տարբերությունն առկա է նաև Աշխարհի Արարչագործութեան 6204 և 6188 թվերի միջև), ապա այդ հավելյալ 16 տարին, որի բացակայությունը Թեոփանեսի մոտ էս հիմնավորում եմ նրա «Խոստովանող» մակդիրով, Հիսուսի մանկության տասներկու և վերջին չորս (Մկրտությունից մինչև Խաչելություն) տարիների գումարն է, որ Քրիստոս ապրել է երկրի վրա իբրև մահկանացու մարդ, կենցաղում անցաւոր ըստ քաղկեդոնական դավանանքի, որ մերժվում է Քրիստոսի Հայտնությունը դավանող բոլոր քրիստոնյաների, այդ թվում հայերի կողմից:

Իսկ ինչո՞վ բացատրել, որ Բյուզանդական ժամանակագրությունը չի զուգընթանում հռոմեականի հետ և Թեոփանեսի մոտ Քրիստոսի Մարդեղութեան 688 թվականը յոթ տարով էտ է ընկնում Հռոմեական Տիրոջ տարվա 695 թվականից – դրա բացատրությունը մեկն է: Քանի որ Աշխարհի Արարչագործութեան Ալեքսանդրյան տոմարը բյուզանդական եկեղեցին է փոխառել հո-

<sup>41</sup> Թեոփանես Խոստովանող, ժամանակագրություն, էջ 81:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Նույն տեղում:

մեականից, ապա Տիեզերական մայրաբաղաճ Կոստանդնուպոլսի անկախությունը Հռոմի նկատմամբ ցուցադրելու համար Աշխարհի Արարչագործության սկիզբը դրել է յոթ տարով ավելի ուշ, քան Հռոմի Ալեքսանդրյան տոմարը – ըստ այսմ՝ Հռոմեական կամ Ալեքսանդրյան տոմարի ավարտը՝ 5500 թվականը, զուգահիստում է Բյուզանդական ժամանակագրության 5493 թվականին: Այդ թվականը արդարանում է նաև, երբ Թեոփանես Խոստովանողի օգտագործած տոմարը համեմատում ենք գրեթե նրան ժամանակակից մեր ունեցած հայերեն վկայականի տվյալների հետ՝ 6188–695=5493: Այսինքն՝ Հռոմեական կամ Բուն Ալեքսանդրյան տոմարի 5501 թվականը (որ է՝ Բյուզանդական տոմարի 5494թ.), Քրիստոսի Հայտնության առաջին տարին է կամ մեր թվարկության առաջին տարին: Իսկ Բյուզանդական քաղկեդոնական տոմարում Քրիստոսի Գալստյան առաջին տարին զուգահիստում է Ալեքսանդրյան տոմարի 5508 թվականին: Այս է, որ բյուզանդագետները անվանում են «Կոստանդնուպոլսի տոմար», որ ճիշտ չէ, քանի որ 5508 թվականը Հռոմեական տոմարի կամ մեր թվարկության ութերորդ տարին է:

Ասվածից հետևում է, որ այսպես կոչված Հռոմայեցիների (հայկական աղբյուրներում՝ Հռոմոց) ժամանակագրությունից օգտվելիս անհրաժեշտ է Թեոփանես Խոստովանողի նշած թվականին ավելացնել յոթ տարի՝ մեր թվարկության ճիշտ տարեթիվը որոշելու համար: Զարմանք է հարուցում, թե բյուզանդական գրադարանային գործի այս եզակի վավերագիրը իր անըմբռնելի տարեթվերով ինչպե՞ս է հայ մատենագրության մեջ 13 դար շարունակ արտագրվելով՝ մնացել անաղարտ, ենթարկվելով ամեն տեսակ որակումների, որի համար նույնիսկ Փիլոն Տիրակացին, կաթողիկոս Սահակ Զորափորեցին և ուրիշներ հանիրավի մեղադրվել են քաղկեդոնականության մեջ:

Իր աշխատության մեջ Ա. Սահակյանն առաջ է քաշում մի տեսակետ, ըստ որի՝ VII դարի վերջին ներսեհ Կամսարական իշխանը հավակնություններ ուներ ոչ միայն Հայաստանի դեռևս վաղուց կորցրած արքայական գահի, այլև հատկապես Երանշահի, ավելի պարզ, Իրանի գահի նկատմամբ, որ վերացել էր 652 թ. Սասանյանների հարստության անկումով: Ըստ այս վարկածի՝ Կամսարական իշխանը, որին Բյուզանդիայի Հուստինիանոս Բ կայսրը շնորհել էր Ապոհյուպատ պատրիկի տիտղոս, հանձնարարություն է տալիս Սովորատի «Եկեղեցական պատմության» թարգմանիչ Փիլոն Տիրակացուն «Կամսարականների գաղափարախոսական նոր ծրագիրն արտահայտելու համար»՝ Մովսես Խորենացու Հայոց պատմության Բ գրքի Ի է գլխից սկսած, որի վերջնակետն է Բ գրքի Դ գլուխը, տասը հատված ավելացնել՝ ցույց տալու համար այդ տոհմի ժառանգական իրավունքը Շիրակի ու Արշարունիքի նկատմամբ և նրանց թագավորական ծագումը՝ դրանով իսկ ուղղակի հաստատելու այն վաղեմի իրավունքը, որը, ըստ ավագության կարգի, Կամսարականները ունեն Երանշահի

արքայական գահի նկատմամբ<sup>44</sup>: Ներսէ՛հ Կամսարականի այս առաջադրանքի հիմքում ընկած է այն պատկերացումը, իբրև Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ որևէ խոսք չի եղել ո՛չ Պահլավիկ ցեղերի ծագման, ո՛չ Կարենյաններից սերած Պերոզամատի ու Կամսարի, ո՛չ էլ նրա անունով Հայաստանում հիմնած նախարարական տան և ժառանգական կալվածների մասին: Իրականում նշված բոլոր տասը հատվածներն ի սկզբանե եղել են Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ և Բ գրքի անկապտելի դրվագներն են, ուստի դժվար է համաձայնել հետագա ընդմիջարկման մասին դրույթի հետ՝ բացի հետևյալ կետից: Մովսես Խորենացին որևէ տեղ իր ամբողջ Պատմութեան մեջ չի նշում, թե Կարենյան Պահլավից սերող հայ Կամսարականների թագավորական ծագումը նրանց երբևէ իրավունք է վերապահել «ըստ ավագութեան կարգի հավակնություն ունենալ Երանշահի արքայական գահի նկատմամբ»: Եվ հենց այս պատճառով էլ Փիլոնի ենթադրյալ «ընդմիջարկումների» մեջ էլ այդպիսի կետ չկա: Խորենացու Պատմութեան մեջ շատ նախարարական տներ կան, որոնք տարբեր տոհմային ավանդությունների համաձայն՝ սերում էին օտար ազգերի թագավորական տներից, բայց նրանցից ոչ ոք չէր հավակնում դառնալ Բաբելոնի, Ասորեստանի, Չինաստանի, Իրանի և այլ երկրների արքայից արքա:

Այժմ կանգնադառնամ Խորենացու Պատմութեան Գ գրքում եղած Արշարունի (Կամսարական) նախարարների արքայական ծագումից բխող արտոնությունների և Հայաստանում ունեցած բարձր դիրքի հարցին: Եթե Կամսարականները VII դարի վերջին, իրոք, Հայաստանում այդքան հեղինակություն և թագավորական պատվի արժանիք ունեին, ապա շատ ավելի արժանապատիվ կլինե՞ր իրենց նպատակները իրագործելու համար հենվել նրանց թագավորական զարմերի մասին Պատմահոր բնագրում առկա հետևյալ հավաստի վկայությունների վրա:

Ըստ Խորենացու, Կամսարականները սերում էին Կարենյան Պահլավի տոհմից, որոնք, ինչպես երեք Պահլավ ցեղերը Պարսկաստանում, համարվում էին բոլոր նախարարներից առաջինը և ավելի պատվական. «որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաջին քան զամենայն նախարարութիւնս Պարսից»<sup>45</sup>: Ուստի որպես Կարենյան Պահլավի շառավիղ, Կամսարականները ևս Հայաստանում ժառանգել էին նրանց թագավորական ծագումը, և նախարարների մեջ թագավորից հետո առաջինը լինելու պատիվը՝ «որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի»<sup>46</sup>: Այդ իրավունքը գործադրվում էր միայն երկրում

<sup>44</sup> Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 123, 125-126:

<sup>45</sup> Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ա. Յարութիւնեան, Տիփլիս, 1913, գիրք Երկրորդ, գլ. ԻԸ, էջ 146:

<sup>46</sup> Նույն տեղում, գիրք Երրորդ, գլ. Ժ, էջ 268:



անիշխանության ժամանակ, ինչպես և թագավորի հարկադիր բացակայության դեպքում (ինչպես Արշակ Բ-ի աքսորն էր Անհուշ բերդում): Այդ բարձրագույն պատվին Կամսարականները Մեծ Հայքի արքունիքում արժանացել էին առաջին հերթին հայ Արշակունի թագավորների նկատմամբ նրանց նախնի Կարենյանների ցուցաբերած հավատարմության համար: Այսպես, Խոսրով փոքր թագավորի մահից հետո, Վրթանես եպիսկոպոսապետը Հայոց աշխարհը և Հայոց նախարարներին՝ զորքերով ու զորապետներով, հանձնեց Արշավիր Կամսարականին՝ «որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի», և իր հետ առնելով Խոսրովի որդի Տիրանին, գնաց Կոստանդնուպոլիս Կոստանդ թագավորի մոտ՝ հոր փոխարեն նրան Հայոց թագավոր կարգելու<sup>47</sup>:

Կամսարականներին Մեծ Հայքի արքունիքում շնորհված բարձր դիրքը և «պատվականագույն» տիտղոսը Հայաստանի բաժանումից հետո (387թ.) հարգվում էր նաև Հռոմեական գերիշխանության տակ անցած Արևմտյան նահանգներում: Ինչպես նշում է Պատմահայրը, երբ Արշակ Գ թագավորը հյուժախտից վախճանվեց Եկեղյաց գավառում, Գազավոնը, որ հոր կողմից սերում էր Կամսարական տոհմից, իսկ մոր կողմից՝ Արշակունյաց, առաջնորդում էր հունաց բաժնի հայ նախարարներին<sup>48</sup>: Որ Գազավոնն իսկապես հայ նախարարների առաջնորդն էր, հաստատում է Թեոդոս Մեծ կայսեր 387 թ. հրովարտակը «Թագի ոսկու մասին», ուղղված Գադգանային՝ Մեծ Ծովքի սատրապին. *Gaddanae satrapae Sophanenaе*, որին ես նույնացնում եմ հիշյալ Գազավոնի հետ՝ *Gadda(o)nas = Gazaonas: D → z* փոխարկումը հանդիպում է շատ դեպքերում՝ *Dadim(a) = Dazimon* (քաղաք), *Mediolanon = Meziolanon* (Միլան), *Beladhuri = Belazori* (արաբ պատմագիր), ռամադան = ռամզան (մահմեդական տոն)<sup>49</sup>: Կառլ Գյուտերբոկը ևս կարծում է, որ, ըստ Թեոդոս Մեծի հիշյալ հրովարտակի (էդիկտ), կայսրերը Մեծ Ծովքի սատրապին համարում էին մյուս սատրապների գլուխ և ներկայացուցիչ<sup>50</sup>: Խորենացուց վերը բերված վկայությունները Արշավիր և Գազավոն Կամսարականների առաջնորդ լինելու մասին՝ թույլ են տալիս եզրակացնել, որ դեռ IV դարում Հայաստանում գործում էր առաջին իշխան Հայոց տիտղոսը, որը «առաւել թագաւորազն» նախարարին իրավունք էր վերապահում կառավարել երկիրը թագավորի բացակայումբ կամ թագավորական իշխանության անկումից հետո՝ «որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի»: Ես «առաջին իշխան Հայոց» տիտղոսը ցույց եմ տվել վաղ հայկական մի վավերագրում

<sup>47</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> Նույն տեղում, գիրք երրորդ, գլ. ԽԸ, էջ 317, 318:

<sup>49</sup> Ա. Մուշեղյան, *Մովսես Խորենացու դարը*, Եր., 2007, էջ 326:

<sup>50</sup> K. Güterbock. *Römisch Armenien und die römischen Satrapien im vierten bis sechsten Jahrhundert*, Königsberg, 1900, S.32.

Հայոց նախարարների Գահնամակում<sup>51</sup>, որի մեզ հասած բնագիրը հաստատվել է (ըստ իմ հաշվարկի) 434-435 թթ.՝ Պարսից արքայից արքա Վռամի (Վահրամ 5-րդ) 17-րդ (Ժէ) տարում, քաղոց ամսին<sup>52</sup>, և դա համապատասխանում է 428 թվականից հետո Հայաստանում հաստատված մարզպանության վարչաքաղաքական իրավիճակին, երբ վերացել էր Արշակունյաց թագավորությունը: Գահնամակում առաջին իշխան Հայոց պատվանունը պատկանում է հորխոռունի Մաղխազին. Մաղխազը արքունի թիկնազորի պետն էր հորխոռունյաց տոհմից, և նրա գահը նախարարների շարքում չորրորդն է եղել, իսկ նոր հաստատված Գահնամակում բարձրացվել է վերտառության մեջ որպես «Առաջին իշխանն Հայոց և Մաղխազն», որից հետո թվարկվում են նախարարների գահերը. «ա. Սինեաց տէր, բ. Ասպետն, գ. Արծրունեաց տէր, (դ. Մաղխազունի – ն. Ադոնցի հավելումը), դ. Մամիկոնէից տէր» և այլն:

Գահնամակի ներածության մեջ «Ի քաղոց ամսոյ ժէ» բոլոր ուսումնասիրողները, այդ թվում և Ստ. Մալխասյանցը, թարգմանում են «Քաղոց ամսի 17-ին»: Իրականում ժէ ամսաթիվ չէ, այլ Վռամ արքայից արքայի թագավորության 17-րդ տարին: Ըստ այսմ, Սահակ Պարթևը Գահնամակի ներածության մեջ հայտնում է, թե ինքը Տիգրանում Արտաշիր արքայի դիվանում տեսել է Ռամական նամակը (իմա՝ Գահնամակը) Վռամ արքայից արքայի 17-րդ տարվա (434 թ.) քաղոց ամսին. «Ես զռամականն զնամա զոր Արտաշիր ի դիւանին տեսի ի քաղոց ամսոյ ժէ: Եւ<sup>53</sup> Վռամայ արքայից արքայի եւ բարերարի...»:

Անկասկած, Գահնամակի նախորդ խմբագրության մեջ, որ մեր ձեռքը չի հասել, առաջին իշխան Հայոց պատվանունը (հորխոռունի Մաղխազից առաջ) շնորհված է եղել Կամսարական նախարարին: Հայաստանի բաժանումից հետո, IV դարի վերջին, երբ Շապուհ Երկայնակյացի որդի Արտաշիրը ըմբոստության համար Հայոց հոսարով Գ թագավորին գերի էր տանում Տիգրոն, ճանապարհին շղթայված Հայոց թագավորին ազատելու փորձի համար Կամսարական և Ամատունի իշխանները մահապատժի ենթարկվեցին, որի հետևանքով առաջին իշխան Հայոց պատվանունը շնորհվեց հորխոռունյաց նախարարին, որը կոչվում էր նաև Մաղխազ: Բայց հետագայում, տեղի տալով Սահակ Պարթև կաթողիկոսի թախանձանքին՝ Արքայից արքա Արտաշիրը Կամսարական և Ամատունի տոհմերի մնացորդներին վերադարձրեց հարքունիս գրաված կալվածները՝ արժանացնելով նրանց ավելի ցածր գահի: Այս է պատճառը, որ մեր ձեռքը հասած հիշյալ Գահնամակում առաջին իշխան Հայոց տիտղոսը շնորհված է Մաղխազին, իսկ Կամսարական իշխանը և Ամատունի տերը գրավում են ԺԲ և ԺԾ գահերը:

<sup>51</sup> Н. Адонцъ, *Армения в эпоху Юстиниана*, СПб, 1908, сс. 249-250.

<sup>52</sup> Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 327:

<sup>53</sup> «Ժէ: Եւ» պետք է ուղղել՝ «Ժէ ամի»:

Ինչպես տեսնում ենք, դեռ IV դարում Կամսարական իշխաններին շնորհված բարձրագույն պատիվը հաստատվում է կողմնակի հազվագյուտ վավերագրերով, ինչպիսիք են Թեոդոս Մեծ կայսեր հրովարտակը և Հայոց նախարարների Գահնամակը:

Նշված և շատ ուրիշ դրվագներ ի ցույց են դնում Կարենյանների և նրանց հետնորդ Կամսարականների անմնացորդ հավատարմությունը Հայոց Արշակունի թագավորներ խոսրով Մեծին, նրա որդի Տրդատ Մեծին, խոսրով Գ-ին:

Բերված վկայությունները մեզ թույլ են տալիս ենթադրել, որ շատ ուսյալ Ներսես Կամսարական պատրիկը խորենացու Պատմության երրորդ գիրքը չի կարգացել, այլապես կպատվիրեր Փիլոն Տիրակացուն այդտեղից ջնջել բոլոր այն հատվածները, որոնց մեջ Սասանյան արքայից արքաները՝ Արտաշիր Պապականից մինչև Շապուհի որդի Արտաշիրը, խիստ թշնամանք են տածում իրենց դեմ ըմբոստացող և Հայաստան փախչող Կարենյանների և նրանց շառավիղ Կամսարական իշխանների հանդեպ՝ կոտորելով և տիկ հանելով նրանց: Ինչպես կարող էր Սասանյանների ատելությունն արժանացած այսպիսի նախնիներով Ներսես Կամսարական պատրիկը VII դարի վերջին հավակնել Երանշահրի ենթադրյալ արքայից արքայի գահին:

Եվ, վերջապես, եթե խորենացու Պատմության մեջ Փիլոնն է Ներսես Կամսարականի պատվերով հատվածներ ավելացրել Կամսարականներին շնորհված տոհմային ժառանգության (Շիրակի և Արշարունիքի), Հայաստանում նախարարների մեջ նրանց ունեցած բարձր դիրքի մասին, ապա V դարի մեր մյուս նշանավոր պատմիչ՝ Փավստոսի Բուզանդարանում ո՞վ է ընդմիջարկումներ հավելել Արշավիր Կամսարականի և նրա տոհմակիցների բարձր դիրքի մասին: Այսպես, ըստ Փավստոսի, պատերազմում սպարապետ Վաչե Մամիկոնյանի նահատակվելուց հետո, քանի որ նրա որդի Արտավազը անշափահաս էր, Տիրան թագավորը զորավարությունը հանձնեց Արշավիր Կամսարականին՝ Շիրակի և Արշարունյաց գավառի իշխանին, և Սյունյաց իշխան Անդոկին<sup>54</sup>: Իսկ երբ Ատրպատականի մարզպան Վարազ Շապուհը, Հայաստան գալով, խաբեությունը խնջույքում շղթայեց Հայոց Տիրան թագավորին և գերի տարավ Պարսից երկիր, հայոց ավագանին հունաց (Կոստանդ) կայսեր մոտ ուղարկեց մեծ նախարարներից Սյունյաց Անդոկի նահապետին և Արշարունյաց նահապետ Արշավիր Կամսարականին, խնդրելով, որ կայսրը զորքով թիկունք լինի Հայոց երկրին՝ ընդդեմ պարսից թագավորի<sup>55</sup>: Իսկ կայսրը Հայաստան գալով՝ «... ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս Հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն և զԱնդոկին. զի այս արք էին, որ

<sup>54</sup> Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի, Եր., 1987, Գ, ԺԱ, էջ 46:

<sup>55</sup> Նույն տեղում, ԻԱ, էջ 86:

չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին»<sup>56</sup>: Իսկ հունաց և հայոց զորքի հաղթութիւնից հետո կայսրը «... ի վերայ երկրին թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ և զԱրշաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարէր. և յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն և զաշխարհն նոցա...»<sup>57</sup> և ինքը կայսրը վերադարձաւ Հունաստան: Այստեղից երևում է, որ Կամսարական իշխանը Անդովկի հետ ճանաչվում էր թագավորի բացակայութեան ժամանակ որպէս Հայոց երկրի և բոլոր նախարարների վերակացու: Ուրեմն, ինչպէս Գագավոն Կամսարականի դեպքում էր, հունաց կայսրերը հարգանքով էին ընդունում Հայոց արքունիքում դրված կարգը:

Հարց է ծագում ինչպէ՞ս է, որ V դարում Խորենացին ձեռքի տակ ունենալով Փավստոսի Պատմութիւնը և շատ դրվագներ ու փաստեր քաղելով Բուզանդարանից, Կամսարականների մասին այս և շատ ուրիշ վկայութիւններ անուշադրութեան է մատնել: Կամ Խորենացու մեկենաս Սահակ Բագրատունին ինչպէ՞ս կարող էր թույլ տալ, որ իր պատվիրած համահավաք «Հայոց մեծերի ծննդաբանութիւնից» կամ էպոսի խոսքով ասած «Հայոց ջոջանց» ազգապատումից դուրս մնա Հայաստանում մեծ հեղինակութիւն վայելող և Արշակունի արքայական ցեղից սերած Կամսարական իշխանների տոհմագրութիւնը, որին ինքը՝ Բագրատունին պետք է ծանոթ լիներ նախ և առաջ Փավստոսի Բուզանդարանից, այն դեպքում, երբ մշտապէս հետևում էր, որպէսզի նույնիսկ «վճենների» նման աննշան ցեղերը շանտեսվեն իր հովանավորած համազգային հիշատակարանում:

Իրականում Խորենացին, որ օգտվել է Բուզանդարանի շատ պատումներից, այժմ էլ լիովին հաստատելով Փավստոսի պատմածը Արշավիր Կամսարականի մասին, իր կողմից մի այլ դրվագով ցույց է տալիս, թե դա նույն Արշավիր Կամսարականն է, որին Խոսրով Փոքր թագավորի մահից հետո Վրթանես եպիսկոպոսապետը հանձնեց Հայոց աշխարհը «որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի», և իր հետ առնելով Խոսրովի որդի Տիրանին՝ գնաց հունաց Կոստանդ կայսեր մոտ՝ նրան հոր փոխարեն թագավոր կարգելու, իսկ երբ պարսից Շապուհ արքան լսեց, թե Տիրանը գնաց կայսեր մոտ, իր եղբայր Ներսէհին ուղարկեց, որ թագավորեցնի հայոց վրա, կարծելով, թե աշխարհը առանց առաջնորդի է մնացել՝ «Իբրև անառաջնորդ զսա (զաշխարհս) վարկուցեալ»: Բայց նրանց դեմ ելաւ քաջ Արշավիր Կամսարականը ամենայն հայաստանյան զորքով և ճակատ տվեց Մոռու կոչված դաշտում: Ու թեև շատ մեծամեծ նախարարներ ընկան պատերազմում, բայց Հայոց գունդը հաղթելով

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>57</sup> Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի շոքս դպրոսիւնս, շորհորդ տպագրութիւն, Վեներիկ, 1933, դպր. Գ, գլ. ԻԱ, էջ 65-67: Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, 1987, Գ, ԻԱ, էջ 88:

փախուստի մատնեց պարսից զորքը, և երկիրը պահեցին մինչև Տիրանի վերադարձը<sup>58</sup> :

Այստեղ, ըստ հորենացու ևս, Արշավիր Կամսարականը թագավորի բացակայությամբ հանդես է գալիս իբրև Հայոց աշխարհի և բոլոր (այդ թվում մեծամեծ) նախարարների առաջնորդ՝ որպես «յոյժ պատուական յետ արքայի», ճիշտ այդպես էլ Փավստոսի Պատմության մեջ՝ Տիրան թագավորի գերեվարության ժամանակ Արշավիր Կամսարականը ինքնաբերաբար հանդես է գալիս որպես Հայոց երկրի և բոլոր նախարարների գլխավոր և «վերակացու»:

Բոլոր նշված կողմնակի աղբյուրները՝ հայոց նախարարների հինավուրց Գահնամակը, IV դարի վերջի Թեոդոս Մեծ Կայսեր լատիներեն էդիկտը, Փավստոսի «Հայոց պատմությունը» իր մի քանի դրվագներով գալիս են հաստատելու, որ Կամսարականների վերաբերյալ հորենացու «Հայոց պատմության» մեջ առկա հատվածները Պատմության սկզբնագրի անկողնույտելի և անկապտելի դրվագներն են, և հնարավոր չէ ապացուցել հակառակը:

Ա. Սահակյանը իր ուսումնասիրություններում առաջ է քաշում մեկ այլ տեսակետ, ըստ որի՝ հորենացու Պատմության երրորդ գրքում առկա Մաշտոցապատումը նույնպես ստեղծվել է VII դարի վերջին Կամսարական ներսես պատրիկի պատվերով՝ Փիլոն Տիրակացու ձեռքով 12 մեծ ու փոքր ընդմիջարկումներով<sup>59</sup>, այն էլ Ղազար Փարպեցու Մաշտոցապատումի հիման վրա, որը սոսկ մեկ-երկու հատված է կրկնում այն ամեն չափազանց արժեքավոր վկայություններից, որ գտնում ենք Մովսես հորենացու երրորդ գրքում և ոչ այլուր:

\*\*\*

Եթե Սովորատի մասնակի համառոտման ժամանակ Փիլոնը զանց է առել միայն առանձին թղթեր, ճառեր և այլն, ապա մինչ այժմ անբացատրելի է մնում մի կարևոր հարց. ե՞րբ են հայերեն Համառոտ Սովորատի մեջ հայտնվել բոլոր այն հայկական դրվագները, ինչպես և հակաքաղկեդոնական ակնհայտ ընդվզումները, որ այժմ առկա են Համառոտ Սովորատում և բացակայում են Մեծ կամ Ընդարձակ Սովորատից: Դրանք չէին կարող մուծված լինել Կ. Պոլսի գրադարանում Սովորատի թարգմանության ժամանակ, քանի որ խիստ վտանգավոր կարող էին լինել Փիլոնի կյանքի համար՝ քաղկեդոնականության մոլեռանդ մթնոլորտում: Բացատրությունը մեկն է՝ մասնակի համառոտված Սովորատը Հայաստան բերելուց հետո Փիլոնը ամենևին չի զբաղվել Մովսես հորենացու բնագրում Կամսարականների արքայական ծագման մասին որևէ ընդմիջարկում անելով կամ հորենացու երրորդ գրքում Մաշտոցապատում հորինելու գործով:

Հայաստան վերադառնալուց հետո Փիլոնը ոչ թե Կամսարականների նստավայր Շիրակում, այլ հենց մայրաքաղաք Դվինում կաթողիկոս Սահակ Զո-

<sup>58</sup> Մովսիսի **Խորենացու** Պատմություն Հայոց, գիրք երրորդ, գլ. Ժ, էջ 268:

<sup>59</sup> Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 129:

րափորեցուն ներկայացրեց հայերեն թարգմանած Սոկրատի «եկեղեցական պատմություն»-ը, ինչպես և գրադարանի տեսուչի հավաստագիրը՝ Սոկրատի բնագիրը մասնակի համառոտելու բացատրություններով հանդերձ: Քննելով Փիլոնի թարգմանած և մասնակի համառոտած Սոկրատի «եկեղեցական պատմությունը», Սահակ կաթողիկոսը, ըստ երևույթին, խիստ զայրացել է Սոկրատի դեմ, որն իր «եկեղեցական պատմությունը» լցրել է ամեն երկրի ու ցեղի նշանավոր ու աննշան աղանդավորներով, նույնիսկ պատմում է մանրամասն, թե ինչպես վրաց կողմերում մի գերյալ կին (*mulier captiva*) խաչ տնկելով և հրաշագործ բժշկություններ քրիստոնյա է դարձնում անհավատներին, բայց ոչ մի խոսքով չի հիշատակում IV դարի երևելի հայ հոգևոր հայրերին, ովքեր մասնակցել են Տիեզերական եկեղեցու ժողովներին, աքսորվել արիոսական Վաղես կայսեր հրամանով, մեծարվել Թեոդոս Մեծ կայսրից, ձեռնադրվել Կեսարիո սուրբ ժողովում:

Սոկրատի ժամանակակից եկեղեցական պատմիչ Սոզոմենոսը անհամեմատ ավելի իրազեկ է հայերի քրիստոնեական դարձին. «Ինչ վերաբերում է հայերին, ապա ես տեղեկացա, որ նրանք արդեն վաղուց ի վեր, քան վրացիները և ուրիշներ, դրանցից առաջ ընդունել էին Քրիստոսի հավատը: Ասում են, թե, իսկապես, Տրդատը, որն այդ ժողովրդի առաջնորդն էր, մի ինչ-որ աստվածանշան հրաշքի պատճառով, որ նրա տան մեջ պատահել էր, իսկույն դարձել էր ինքը քրիստոնյա, ու նաև հրամայել էր, որ քարոզության միջոցով բոլոր իր հպատակները ընդունեն այդ կրոնը»<sup>60</sup>:

Ուստի Սահակ Զորափորեցի կաթողիկոսը պահանջում է Փիլոնից՝ հիմնովին խմբագրել Սոկրատի Պատմությունը և նրա մանրակրկիտ անարժեք պատմածները համառոտելով, հավաստի վկայություններով ցույց տալ հայ երևելի հոգևոր հայրերի գործերը, ովքեր եղել են Տիեզերական եկեղեցու հայրերի գործակիցներ և իրենց ավանդն են ունեցել նոր հավատի տարածման և աղանդների դեմ մղած պայքարում: Չմոռանանք նաև Փոքր Սոկրատի մեջ Փիլոնի մոլծած մինչև իսկ իր ժամանակի՝ VII դարի վերջի հայ եկեղեցու հակաքաղկեդոնական ընդվզումները: Բերեմ միայն մի ուշագրավ նմուշ հայկական վկայություններով խմբագրված, նորամշակ Համառոտ (կամ Փոքր) Սոկրատից: Շատ հնարամիտ է Գրիգոր Լուսավորչի կերպարի ստեղծումը Փոքր Սոկրատի մեջ: Սոկրատ պատմագիրը հունարեն բնագրում շատ է խոսում Գրիգոր Նազիանզացու, Բարսեղ Կեսարացու, նրա եղբայր Գրիգոր Նյուսացու և այլոց մասին, և հայ ընթերցողը պետք է տարակուսեր, թե ինչպե՞ս է, որ հույն եկեղեցական պատմագիրը որևէ գաղափար չունի Հայաստանի մեծ Լուսավորիչ Գրիգորի մասին: Աստվածաբան կոչված Գրիգոր Նազիանզացու խոնարհությունը

<sup>60</sup> **Hermiae Sozomeni Ecclesiasticae Historiae**, lib. II, cap. VIII. In: **J. - P. Migne**. *Patrologiae Cursus Completus*, T. 67, col. 955.

և ոչ պատվասեր վարքը ցույց տալու համար Սոկրատը նշում է, թե նա հրաժարվեց եպիսկոպոս ձեռնադրվելու պատվից և աննկատ հեռացավ իր հայրենի Նազիանզի կողմերը, մինչդեռ Նեկտարիոսը, որ սինկղիտոսական արյուն ուներ, հափշտակեց ժողովրդից Կոստանդնուպոլսի եպիսկոպոսությունը. «քանզի Գրիգորիոս, որպէս և սակաւ ինչ յառաջն ասացի, հրաժարեալ ի Նանձիանձոյն կոյս համբառնալ առաքիւր: Իսկ այր ոմն էր Նեկտարիոս անուն, ի սինկղիտոսական արենէ, հանդարտ աւրինակաւ, վասն որոյ սքանչելի եղեալ. և զպոէտորականն ընձեռնելով զիշխանութիւն յափշտակեալ ի ժողովրդենէն յեպիսկոպոսութիւնն նախակարգեցաւ...»<sup>61</sup>:

Եվ ահա, Սահակ Զորափորեցու պահանջով Փիլոնը Սոկրատի Պատմություն V գրքի 8-րդ գլխից Գրիգոր Նազիանզացու և Նեկտարիոսի համեմատությունն այս հատվածը փոխադրում է նոր խմբագրվող Համառոտ Սոկրատի մեջ և Ագաթանգեղոսի Պատմությունից առած բառուբանով՝ Գրիգոր Աստվածաբանի տեղ, անսպասելի ստեղծում է Գրիգոր Լուսավորչի կերպարը, որին հաջորդում է դարձյալ Նեկտարիոս եպիսկոպոսը: Եվ Փիլոնն այս ամենն անում է այնքան աննկատ, որ նույնիսկ Մեծ և Փոքր Սոկրատների տեքստերը մանրամասն քննած Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսյանը և այլ բժախնդիր ուսումնասիրողներ, ինչպես Ռ.Վ.Պոմստեր<sup>62</sup>, չեն նկատել այս կերպարանափոխումը. «Իսկ Գրիգորիոս հրաժարէր (ձ. հրաժարեալ էր) վասն առաւելութեան և պատուոյ չիւր բնիկ եկեղեցին և ի վիճակն, զի մի իւրքն զրկեսցին ի նորա լուսաւոր վարդապետութենէն»<sup>63</sup>: Իսկ այր ոմն երեւելի ի սինկղիտոսացն, որք խորհրդականք կոչին, հանդարտ օրինակաւ եւ սքանչելի երևեալ, որ զպոէտորական իշխանութիւնն ունէր ըստ ընտրութեան ժողովրդեանն Աստուծոյ, զնա վերակոչէ թագաւորն ի վերակացութիւնն եկեղեցւոյն Կոստանդնուպոլսի»<sup>64</sup>:

Պատկերն ամբողջացնելու համար նշենք, որ Համառոտ Սոկրատում Գրիգոր Լուսավորչի կերպարին նախորդում է «Հաճախապատում ճառ»-ի նմանությունամբ Սահակ Զորափորեցու հորինած մի շարական, որի մեջ Սուրբ Կույսից ծնված Քրիստոս ներկայացված է իբրև հրաշափառ խառնված՝ միավորված Մարդ և Աստված, որը մարդկային կրքեր է կրել, բայց անփոփոխելի և

<sup>61</sup> Մեծ Սոկրատ, գիրք Ե, գլ. Ը, էջ 418-419: Ընդգծումը մերն է – Ա. Մ.:

<sup>62</sup> *The Armenian Adaptation of the Ecclesiastical History of Socrates Scholasticus*. [Commonly known as “The Shorter Socrates”]. Translation of the Armenian Text and Commentary by **Robert W. Thomson**. Leuven – Paris – Sterling: Peeters, 2001, p. 149.

<sup>63</sup> «Իսկ Գրիգորիոսը հրաժարվեց առավել փառքից և պատվից՝ հանուն իր բնիկ եկեղեցու և վիճակի, որպեսզի յուրայինները չզրկվեն իր լուսավոր վարդապետությունից» (թարգմանությունն իմն է – Ա. Մ.): Հմմտ. **Ագաթանգեղայ Պատմություն Հայոց** (այսուհետ՝ **Ագաթ.**), աշխատութեամբ **Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909. «(Սուրբ Գրիգոր) առաւել ևս զիւր վիճակն, զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ [...] զամենայն ատուս կենաց իւրոց լուսաւորէ» (885), «վասն նորին լուսաւոր վարդապետութեանն» (16):

<sup>64</sup> Փոքր Սոկրատ, գլ. Գ, էջ 418-419:

անբաժանելի է որպես Աստված. «Իսկ որ յաղագս տնտեսութեան են շարժմունք, բանիւ հաւատոյ, զծնեալն ի Հօրէ Բանն Աստուած, յառաջ քան զյաւիտեանս և յետ այսորիկ ի Կուսէ մարմնացեալ իմն ածեմք (ուղղում եմ ի մի ածեմք - Ա. Մ.) և ոչ բաժանեմք սքանչելի և հրաշափառ խառնուած մարդոյ և Աստուծոյ միաւորելոց, և լինել Աստուած ամենայն յամենայնի. որ կրեաց զկիրս մարդկայինս և կ'այ մնայ Աստուած առանց փոփոխելոյ և ընդ Երրորդութեան օրհնի միութեամբ և ոչ բաժանի: Արդ՝ որք այսպէս խոստովանին, և հաւատացեն, ընկալցին զօրութիւնս յերկնաւորացն և յերկրաւորացս. իսկ որք ոչ այսպէս ունին, հեռի եղիցի ի նոցանէ»<sup>65</sup>: Այս ամբողջ ճառը, որով Լուսավորիչն ընդվզում է ընդդէմ քաղկեդոնականութեան, նույնպէս բացակայում է Մեծ Սոկրատում: Նման հայաշունչ հատվածները բազմաթիվ են Սահակ Չորրորդի խմբագրած Սոկրատում և առանձին հոդվածի նյութ կարող են ծառայել, ուստի դրանք թողնում եմ այլ ժամանակի:

Այսպիսով, Համառոտ կարող է կոչվել Սոկրատի այն խմբագրությունը, որը Սահակ կաթողիկոսի ջանքերով լրացվել է հայկական դրվագներով, ինչպես և հակաքաղկեդոնական ընդվզումներով<sup>66</sup>, իսկ Կ. Պոլսում Փիլոնի մասնակի համառոտած Սոկրատը, որը չունի հայկական դրվագներ, ինչպես և հակաքաղկեդոնական մեկնություններ, պետք է նույնացվի Մեծ կամ Ընդարձակ Սոկրատի հետ: Այսպիսով, Թովմա դպիրը Սիղբեստրոսի Համառոտ վարքի հետ մեկ միացյալ մատյանում արտագրել է ոչ թե 695 թ. Կ. Պոլսից Փիլոնի բերած Մեծ կամ Ընդարձակ Սոկրատը (եկեղեցական պատմության յոթ գրքերով), այլ Սահակ Չորրորդի կաթողիկոսի պահանջով երկրորդ անգամ համառոտված Սոկրատը, որը լրացվել է հայկական դրվագներով և հակաքաղկեդոնական ընդվզումներով: Եվ ահա «Սիղբեստրոս-Սոկրատ» համառոտ միացյալ մատյանը բանասիրության մեջ ստացել է «Փոքր Սոկրատ» անունը, քանզի սկզբից ունի Սիղբեստրոսի Համառոտ վարքը Սոկրատ պատմագրի Առաջաբանով մեկ ընդհանուր միասնական գլխակարգությամբ (Սիղբ. Ա-ԺԳ, Սոկր. ԺԳ-ՃՂԱ):

Ինչ վերաբերում է Սոկրատի թարգմանության վերջաբանում «Յիշատակարան շարագրողի» վերնագրով Փիլոնի հիշատակարանին, ըստ Ա. Սահակյանի՝ այն «ավելի շուտ ներբողական մաղթանք է՝ ուղղված իշխան Ներսես Կամսարականին: Դրանից կարելի է հաստատապես կուսակցական համառոտման և թարգմանության պատվիրատուի միևնույն անձը՝ Ներսես ապոստոլական պատրիկ»<sup>67</sup>:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 417-418:

<sup>66</sup> Այս հանգամանքն ընդգծում է նաև Մ. Շիրինյանը. «Будучи антихалкедонитским трудом, Малый Сократ использовался как оружие в догматической борьбе монофизитов». տե՛ս **Մ. Շիրինյան**. «Краткая редакция древнеармянского перевода «Церковной истории» Сократа Схоластика», *Византийский временник*, т. 43, Москва, 1982, с. 239:

<sup>67</sup> **Ա. Սահակյան**, նշվ. աշխ., էջ 136:



Նախ այս առթիվ միանգամայն տեղին է Ն. Ադոնցի դիտողությունը. «Ամեն պարագային Ներսէ՛հ Կամսարականը չէր կարող պատվիրել Փիլոնի գործը, քանի որ 696 թվին նա արդեն մեռած էր և երկրի պետը Սմբատ Բագրատունին էր»<sup>68</sup>: Կնշանակի՛ Ներսէ՛հ պատրիկը վախճանված է եղել Փիլոնի Հայաստան վերադառնալուց (695 թվականից) շորս տարի առաջ՝ Սմբատ Բագրատունի Բյուրատյանի հետ ունեցած այն ընդհարման ժամանակ, երբ, ինչպես նշեցի վերևում, Սմբատը ընդվզեց արաբներից պարտություն կրած Հուստինիանոսի դեմ և իրեն հռչակեց Հայոց իշխան: Եթե նույնիսկ 695 թվին Ներսէ՛հ Կամսարականը ողջ լիներ, Սովորատի համառոտման պատվիրողը բնավ այդ բյուզանդապետ պատրիկը չէր կարող լինել, նկատի առնելով այն հակաքաղկեդոնական բուռն ընդվզումները, որ առկա են Համառոտ Սովորատում: Իսկ որ Փիլոնի հիշատակարանը բոլորովին էլ ներբողական մաղթանք չէ Ներսէ՛հ պատրիկի հասցեին, այլ մեղքերի պարսավ և թողություն, հաստատվում է հիշատակարանի պարզ ու շիտակ քննությունից, որի մեջ Փիլոնը բացահայտում է Ներսէ՛հ Կամսարական պատրիկին վիճակված ձախորդ ճակատագիրը.

«Բայց մեր աստանօր ուրեք զպատմութիւնս դադարեցուցեալ, ով տէր Ներսէ՛հ Կամսարական, ապիհիւպատ պատրիկ, որ եկեղեցեաց ես շինող, միշտ զխաղաղութիւն կալցիս ի Քրիստոսէ, որ տուողն է խաղաղութեան հանապազ. զնախանձն կալցիս (ձ.՝ առցես — Ա. Մ.) զբարեպաշտ թագաւորացն հաստատել ի քում անձինդ...»:

Որոշ հետազոտողներ Փիլոնի այս հիշատակարանից կախման կետերով հեռացնում են Ներսէ՛հ Կամսարականի ձախորդ ճակատագրին վերաբերող տողերը, որոնք ուղղակի առնչվում են նախորդ էջերում իմ բացահայտած փաստերի՝ զոհված Աշոտ Բագրատունու հիշատակն անարգելու և նրա տոհմակից Սմբատ Բագրատունու վրիժառություն հետ: Այդ տողերում Փիլոնը դառն նախատինքով հիշեցնում է ապուհյուպատ պատրիկին ոչ վաղ անցյալում հասած, ավելին՝ պատուհասած աղետները՝ ակնարկելով, որ նա ինքն է դրանց առիթներ տվել. «...հաստատել ի քում անձինդ զբարէպաշտութեան ջանս: Մի և մի իւրի տալ պատճառս և կորնչիցիս ի ճանապարհացն արդարութեան, և մի ընդդիմակցացն որ ի վայր բերիցի՝ քաշեալ և խտտորեալ լիցիս, այլ զվերին(ն) խորհելով փախիցես ի [երկրաւոր] զբաղմանց, և երթիցես զհետ արդարութեան, զհաւատոց, զսիրոյ. բուռն հարկանելով (զ)կենացն յաւիտենականացն որպէս բարեպաշտագոյն թագաւորն Թէոդոս»<sup>69</sup>:

Իմ թարգմանությունն է՝ «...միշտ խաղաղություն ընդունես Քրիստոսից, որ խաղաղության տվողն է հանապազ. բարեպաշտ թագավորներից բարի նախանձով լցվես և հաստատես քո անձի վրա բարեպաշտության ձգտումը, ոչ

<sup>68</sup> Ն. Ադոնց, Փոքր Սովորատի հեղինակը, էջ 359:

<sup>69</sup> Համառոտ Սովորատ, էջ 688-689:

մի բանով առիթներ չտաս և չկորնչես արդարության նամապարհներին, և ոչ էլ ընդդիմակիցներից վայր գլորվելով՝ գետնաբարձ և խտտորյալ լինես, այլ վերինը խորհելով՝ խույս տաս [երկրային] արարներից և ընթանաս արդարության, հավատի, սիրո հետևից՝ ամուր կառչելով հավիտենական կյանքին՝ ինչպես բարեպաշտագույն Թեոդոս թագավորը»։ Այստեղ ևս Փիլոնը նկատի ունի V դարի առաջին կեսի Հռոմի Թեոդոս Բ կայսրին՝ հակառակ շարափառ և մոլագար Հուստինիանոսի, որի քաղկեդոնական որոգայթն ընկած ներսես պատրիկին Փիլոնը խտտորյալ (մոլորյալ) է անվանում։

«Եւ [յայնժամ] զամենայն զոր ինչ և արասցես, յաջողեսցի քեզ, եւ պատերազմն վանի աղօթիւք, զոր լուար ի պատմութենէս, զոր և տեսաք» (էջ 689)։ Ընդգծված բառերը Փիլոնը քաղել է Փոքր Սոկրատի ՃՄԱ գլխից. «Իսկ եթէ երբէք պատերազմ շարժէր, ըստ Դաւթի թագաւորի յԱստուած յուսացեալ Թէոդոս թագաւոր, վանէր զպատերազմունս, միշտ զյաղթութեան շնորհ ունելով (առաւել աղօթիւք զինուքն վառէր, քան թէ երկաթով), որ եւ զպարսկական պատերազմն պարտեալ էառ զխաղաղութիւն ի նոսա»<sup>70</sup>։

Այն պարագան, որ Համառոտ կամ Փոքր Սոկրատից Փիլոնի քաղած «վանէր զպատերազմունս [...] աղօթիւք» դարձվածը էապես տարբեր է Մեծ կամ Ընդարձակ Սոկրատի վկայությունից<sup>71</sup>, նշանակում է, աղոթքով պատերազմ վանելու շնորհը ոչ թէ Սոկրատ պատմագրի, այլ Փիլոնի սեփական մեկնաբանումն է, որ նա վերագրում է Թեոդոս կայսրին. և ուրեմն Փիլոնը ինքն իր խոսքն է Համառոտ Սոկրատից մեջբերել վերջաբանում՝ «եւ պատերազմն վանի աղօթիւք, զոր լուար ի պատմութենէս, զոր և տեսաք»։ Ուստի այս դարձվածը ինձ համար թանկագին վկայություն է ժամանակագրական առումով, քանզի թույլ է տալիս հաստատել, որ ներսես Կամսարականի մեղսաքափիչ գիրը կցվել է «Յիշատակարանն շարագրողի Սոկրատայ» վերջաբանին ոչ շուտ, քան 696 թիվը, Սահակ կաթողիկոսի թույլտվությամբ Սոկրատի Պատմության հայերեն թարգմանությունը հիմնովին համառոտելուց և հայկական դրվագներով լրացվելուց հետո միայն, երբ վախճանված իշխանի ժառանգները հանձն են առել հոգալ «Համառոտ Սիղբեստրոս — Սոկրատ» միացյալ մատյանի բազմացման և հրատարակման ծախքը՝ խտտորյալ քաղկեդոնական պատրիկի հոգու փրկության համար։ Ուստի Փիլոնը վերջնամասում գրում է. «զի և խաղա-

<sup>70</sup> Փոքր Սոկրատ, էջ 626-627։

<sup>71</sup> Մեծ Սոկրատի համապատասխան գլխում բացակայում է «վանէր զպատերազմունս» խոսքը՝ «Իսկ թէ երբէք պատերազմ շարժէր, ըստ Դաւթի մարգարէին, Թէոդոսիոս նման նմա առ բարեպաշտութիւնն յԱստուած ապաիմէր, գիտելով զնա պատերազմականացն լինել սատարիչ. և աղաթքն զնոսա պարտեցին» (գիրք է, գլուխ 22, էջ 626-627)։ Ա. Սահակյանը իր գրքում (էջ 139) հիշյալ հղումը վերագրում է Կոստանդիանոս կայսրին, որը պատերազմը շիջում էր աղոթքով (տե՛ս Մեծ և Փոքր Սոկրատ, էջ 55)։ Մինչդեռ Փիլոնը նկատի ունի աղոթքով պատերազմները վանելու Թեոդոս կայսրի շնորհը։

ղութիւն Քրիստոսի բնակեցցի ի քեզ առատապէս, և յեկեղեցիս քո և յաշխարհի: Զի որոց ցանկացար պատմութեանս թարգմանել, ընդ նոյն ճանապարհ թագաւորաց գնասցես շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» – շատ ուշագրավ պահ է ի սկզբանե քրիստոնեական եկեղեցին է մարդկանց և աշխարհին խաղաղություն մաղթում, իսկ այստեղ Փիլոն թարգմանիչն է խաղաղություն մաղթում ներսեհին և նրա շինած եկեղեցիներին:

\*\*\*

Եթե նկատի ունենանք, որ 696 թ. Սահակ կաթողիկոսը միակ կենդանի վկան էր, որը 18 տարի առաջ իր աթոռակալության առաջին տարում (678թ.) ինքն էր եղել Սիղբեստրոսի հայերեն համառոտ Վարքի պատվիրատուն և ստացողը, ապա կասկած չի կարող լինել, որ ոչ թե Թովմա դպիրը, այլ Սահակ Զորափորեցի կաթողիկոսն է անձամբ իր անունից շարադրել Սիղբեստրոսի Համառոտ Վարքի սկզբում կցված «Յառաջ քան զութուտասն ամ» հիշատակարանը, որն իրապես Սահակ Զորափորեցու հրահանգն է կաթողիկոսական դիվանապետին: Սոկրատի երկրորդ համառոտումն ավարտելուց հետո Սահակ կաթողիկոսը իր պահուստից հանեց Սիղբեստրոսի Համառոտ Վարքը, որի հրապարակումը ժամանակին արգելել էր վրաց ուղղափառ եկեղեցին և մեծարանքով հիշատակելով Աբասուն Գրիգոր թարգմանի հետ նրան նպաստ մատուցած Գուգարքի «ընդ փառաւորս յիշելի» ներսեհ իշխանին, որոշեց այդ երկու գաղափարակից երկերը հրատարակել նույն ձեռագիր մատչանում և այդ մասին հայտնում է իր դիվանապետին<sup>72</sup>. «Յառաջ քան զութուտասն ամ ի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդ զայդ Սոկրատայ զԵկեղեցական պատմութիւն՝ թարգմանեալ էր Աբասուն Գրիգորի Զորոյփորեցու թարգմանի<sup>73</sup> ընդ փառաւորս յիշելոյ. ներսեհի վրաց իշխանին փեսային Կամսարականաց զգիրս պատմութեան վարուց Սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ եւ կայր ի քարտիսի. և այժմ պատշաճ համարեցաք (զգիրս զայս Սիղբեստրոսի – Ա. Մ.) և առ դմին գրոց (Համառոտ Սոկրատայ – Ա. Մ.) գրել ձեռամբ Թովմայ դպրի պատրաստ լինելով մագաղաթին»:

Հիշատակարանի վերջում ընդգծված բառերը ավելացնում ենք Մեսրոպ Տեր-Մովսեսյանի Առաջաբանում արտատպված երուսաղեմի ձեռագրից: Այստեղ Սահակ Զորափորեցին հիշեցնում է միացյալ մատչանը վայելուչ ձեռագրով «ձեռամբ Թովմայ դպրի» արտագրելու մասին, որովհետև ակներև նպատակ ուներ մի քանի օրինակ ուղարկել Հռոմի պապին: Մաշտոցի Մատե-

<sup>72</sup> Հիշատակարանը փառում ենք Մաշտոցի Մատենադարանի 1531 ձեռագրից (թ. 206ա), որի համեմատ Մ. Տեր-Մովսեսյանի Առաջաբանում (1896 թ. էջ ԺԷ) արտատպված երուսաղեմի ձեռագրի «Յառաջ քան զութուտասն ամ» հիշատակարանը ունի որոշ շեղումներ:

<sup>73</sup> Մ. Տեր-Մովսեսյանը իր Առաջաբանում (էջ ԺԷ) «քարգմանի» բառը միանգամայն անտեղի փոխել է «հրամանա»:

նադարանի 1531 ձեռագիրը վերջում շունի «ձեռամբ Թովմա դպրի պատրաստ լինելով մագաղաթին» արտահայտությունը: Ակնհայտ է, որ ձեռագիրն ավելի ուշ շրջանի է, ուստի արտագրող գրիչը իր ժամանակի համար գործնական չի համարել և բաց է թողել վերջին ցուցումը, որ առկա է միմիայն Երուսաղեմի՝ Կալկաթայից բերված ձեռագրում: Մագաղաթ պատրաստելու կամ հայթայթելու պատվերը դիտել է տալիս, որ դրա սակավություն եղել է ոչ միայն Կ. Պոլսում, այլև Հայաստանում:

Միացյալ մատյանում առաջին տեղում զետեղված է Սիդբեստրոսի Համառոտ Վարքը ոչ միայն այն պատճառով, որ ավելի վաղ էր թարգմանվել, այլ նկատի առնելով, որ Սիդբեստրոսի Վարքում ավելի ցայտուն է պանծացվում Հռոմը և Հռոմի Սուրբ Պետրոսի աթոռի գերակայությունը Կ. Պոլսի և նրա Սուրբ աթոռի նկատմամբ: Հետագա բոլոր պատմիչներն ու մատենագիրները Համառոտ Սիդբեստրոսի և Սոկրատի հենց այս միացյալ շարադրանքն են անվանել միասնական անունով Փոքր Սոկրատ, քանի որ միացյալ ձեռագիրը սկսվում է Սոկրատ պատմագրին վերագրված առաջաբանով:

Այդ միացյալ ձեռագիր մատյանը շարունակեց իր ավելի քան հազարամյա ընթացքը՝ VII դարից ի վեր արտացոլվելով հայ նշանավոր պատմիչների և եկեղեցական գործիչների երկերում:

1795 թ. Հարություն քհն. Տեր-Շմավոնյանը տպագրեց Մադրասի գրատան հին հայ հեղինակների 41 անուն երկերի և նախնյաց թարգմանական երկերի 18 անուն ցանկ: Այս 18 ձեռագիր հին գրքերի մեջ էր Մեծ կամ Ընդարձակ կոչված Սոկրատի «եկեղեցական պատմությունը»: Այնուհետև թվարկվում են այդ «նախնեաց թարգմանությունները»՝ «Յովսէփոս, Երանոս, Եւսեբիոս, Աթանաս Հայրապետ, Եպիփան Կիպրացի, Պատմութիւնք Արևելեան վկայից և Սոկրատ [...]»: «Ազգարարի» խմբագիրը համոզված եզրակացնում է, որ 7 գրքից բաղկացած Սոկրատի Պատմությունը համառոտվել է ներսես իշխանի խնդրանքով Անաստաս կաթողիկոսի օրոք՝ «Հատորս է և զայս ևս ի Յունաց լեզուէ թարգմանեցաւ զոր համառօտեցաւ վասն խնդրոյ ներսիսի իշխանին ի ժամանակս կաթողիկոսութեանն Անաստասայ [...] զայս է գիրքն ևս ի թարգմանչացն եղել թարգմանեցեալ»: Խմբագիր քահանան իր ձեռքի տակ ունեն թե՛ Մեծ, և թե՛ Համառոտ Սոկրատները, ինչպես ինքն է վկայում<sup>74</sup>:

Դրանից շուրջ 70 տարի անց Մադրասում գտնված այս նույն ձեռագիր մատյանների մասին «Արշալոյս Արարատեան» լրագիրն իր 1868 թ. թիվ 845-ում հաղորդում է հետևյալը. «Գիտնական և ազգասէր գերապատիւ եկեղեցական մի կրթանուցանէ մեզ Կալկաթայէն, թէ հնութեան վերաբերեալ քանի մը մատեաններ ունի, զորս պատրաստ է ընծայելու, ձեռամբ Արշալուսոյ խմբագրին այնպիսի ճշմարիտ ազգասիրի կամ այնպիսի միաբանական ուխտի մը,

<sup>74</sup> Մեսրոպ վրդ. Տեր Մովսէսեան, Յառաջաբան, էջ 9-է:

որ հնութեանց յարգը ճանաչելով յօժարամիտ ըլլայ և խոստանայ տպագրութեամբ ի լոյս ընծայել գլխեալ մատենաները»։ Սրան հաջորդում է գրացուցակը, այդ թվում՝ «Պատմութիւն Փիլոնի Տարակացոյ, որոյ սկսուած բանից եղաւ ի ստորև ի տեղեկութիւն հնասիրաց»։ Ավելի ուշ «Արշալոյս Արարատեան»-ի խմբագրի միջնորդութեամբ Կալկաթայի ձեռագիր գրքերն ընծայվում են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրատանը, որից պարզվում է, որ այդ ցուցակում նշված «Պատմութիւն Փիլոնի Տարակացոյ» կոչվածը Մեծ Սոկրատն է։

\*\*\*

Երիտասարդ Մովսէս Խորենացին՝ այլ ուսումնականների հետ Ալեքսանդրիայից վերադառնալիս՝ 442-443 թթ. հողմերից մղված առագաստանավով Հելլադայի փոխարեն հայտնվում է Իտալիայում. «Նաւել յԵլլադայ կամելով յԻտալիա բռնութեամբ անկաք հողմոց. և ողջունեալ ի հանգիստ սրբոցն Պետրոսի և Պաւղոսի, և ոչ բազում ի Հռովմայեցոցն կացեալ քաղաքի...»<sup>75</sup>։ Կասկած չի կարող լինել, որ «Ի յիշատակի սրբոցն Հռիփսիմեայ և նորուն վկայակցացն» հուզիչ ներբողյանի պատանի հեղինակը այցելած պիտի լիներ նաև Հռոմի մերձակա Սուրբ Պողոսի լեռնավանքը, որտեղից մոտ 300 թվին 70 Հռիփսիմյանց կույսեր իրենց սնուցող մայր Գայանեի հետ միասին գիշերով փախան Եգիպտոս և այնտեղից էլ Սուրբ Աստվածածնի ցուցումով նրանցից 37-ը եկան Հայաստան՝ Վաղարշապատում նահատակվելու<sup>76</sup>։ Հնարավոր է, որ Հռոմի առաջին եպիսկոպոս Սիղբեստրոսի Վարքին Խորենացին ծանոթ լիներ հենց Ալեքսանդրիայում ուսանելիս։ Հռիփսիմյանց կույսերի փախուստից անմիջապես հետո Հռոմից հալածվում է նաև Սուրբ Սիղբեստրոսը իր աշակերտներով (301-304 թթ.) և թաքնվում Սերապտիոն լեռան քարայրում։

Այնուհետև Հելլադայում Ատտիկեի (Աթենքի) գրադարանում նա գտնում է Գավիթ Հռովմայեցու հունարեն եկլեսիաստէս գիրքը (Գիրք ժողովողի), որի մեջ նկարագրված է Հռիփսիմյանց կույսերի փախուստը Եգիպտոս։

Թեև Սոկրատը իր Պատմության մեջ Սիղբեստրոսին չի հիշատակում, բայց նրա ժամանակակից պատմագիր Սոզոմենոսը իր «Եկեղեցական պատմության» առաջին գրքի Բ գլխում Սիղբեստրոսին (հուն.՝ Σίλβηστρος, լատ.՝ Sylvester, Հռոմի Պապ 314-335 թթ., դեկտեմբերի 31-ը Գրիգորյան օրացույցով նշվում է իբրև «Սիլվեստրի օր») ներկայացնում է որպես իրական, նշանավոր եպիսկոպոս՝ Կրիսպոս և Կոստանդինոս կեսարների օրոք, IV դարի սկզբին։

<sup>75</sup> **Մովսիս Խորենացյ** Պատմութիւն Հայոց, գիրք Երրորդ, գլ. ԿԲ, էջ 346:

<sup>76</sup> **Ա. Մուշեղյան**, «Ագաթանգեղոսի «Պատմությունը». ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը», Պատմա-բանասիրական հանդես, 2012, թիվ 1, էջ 196-222:

Մեսրոպ վարդապետի գրքի լույս տեսնելուց հետո էջմիածնի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը և Գրիգոր հալաթյանցը 1898 թվին, միմյանցից անկախ, հորենացու Պատմության մեջ ցույց տվեցին մի ընդարձակ հատված, որ գրեթե բառացի առնված էր Սիղբեստրոսի Վարքի հայերեն ընդարձակ թարգմանությունից, որի մեջ հորենացին Մեսրոպ Մաշտոցին փառաբանում է այն ներբողական խոսքով, որ Վարքում նվիրված է Սիղբեստրոսին. «Վասն զի ամբարտաւանութիւն և մարդահանձոյութիւն առ ի նորա վարս տեղի գտանել ոչ ուրեք կարացին. այլ հեզ և բարիակամ և բարէխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր. վասն զի գոյր տեսեամբ հրեշտակական բանիւ տրամապայծառացեալ, գործով սուրբ, մարմնով արտափայլեալ, սարսիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր: Այլ վասն զի զբոլորսն նորա զուղղութիւնսն ոչ եմ բաւական ասել, առ ի մասնաւորականսն նորա գործեցեալս դարձուցից զբանսս»<sup>77</sup>: Այս փաստի ազդեցութեամբ շատ բանասերներ, այդ թվում նաև Սոկրատի և Սիղբեստրոսի բազմաշարչար հրատարակիչ Մեսրոպ վարդապետը, հետևեցին այն կարծիքին, թե VIII դարում ապրած Մովսես հորենացին արտագրել է Սիղբեստրոսի Վարքի այդ հատվածը և ձոնել իր վարդապետ Մաշտոցին: Բայց այն ժամանակ ոչ ոք չհարցրեց՝ եթե VII դարի վերջին Համառոտված Սիղբեստրոսի Վարքը չունի Մաշտոցին փառաբանող հատվածը, ապա VIII դարում ապրած հորենացին որտեղի՞ց վերցրեց միայն Ընդարձակ Սիղբեստրոսի Վարքում առկա նշված ձոնը: Կամ ինքը՝ Փիլոն Տիրակացին, ուրկի՞ց գտավ այդ ներբողական հատվածը և մուծեց հորենացու մեջ, երբ Գրիգոր Ջորափորեցու Համառոտած Սիղբեստրոսի Վարքում այն չկա: Հենց այս փաստը ևս մի ապացույց է, որ Սիղբեստրոսի Ընդարձակ Վարքը թարգմանված է եղել V դարի առաջին կեսին և երիտասարդ Մովսես հորենացին այն օգտագործել է իր սիրելի ուսուցչին մեծարելու համար: Դա Սիղբեստրոսի այն հնագույն Վարքն է, որում հիշատակվում են Սերապտինոս լեռը, ինչպես նաև ելեփանտական բորոտութեամբ վարակված Կոստանդիանոսին ապարդյուն բժշկող «արիողկեանն կախարդք և Մարսիկեանն բժիշկք. և ոչ միայն նոքա, այլ և որք ի Պարսից ածեալք»<sup>78</sup>, որպիսիք Սիղբեստրոսի այլ խմբագրություններում չեն հիշատակվում, բայց առկա են հորենացու երկրորդ գրքի ՋԳ գլխում. «Ձոր ոչ կարացին բուժել արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն. յաղագս որոյ յղեաց առ Տրդատ՝ առաքել նմա դիվս ի Պարսից և ի Հնդկաց. սակայն և այնք ոչ հասին նմա յօգուտ»<sup>79</sup>: Բացի այդ, հորենացու Պատմության Սիղբեստրոսի Վարքում և Մեսրոպ վարդապետի հրատարակած

<sup>77</sup> Պատմութիւն Վարուց Սրբոյն Սիղբեստրոսի, էջ 699:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 722:

<sup>79</sup> **Մովսիսի հորենացու Պատմութիւն Հայոց**, գիրք երկրորդ, գլ. ԶԳ, էջ 226-227:

Սիղբեստրոսի Ընդարձակ Վարքում հիշատակվում է Դիոկղետիանոսի դուստր (ոչ թե թոռ - Ա. Մ.) Մաքսիմինան՝ «հրապուրեալ ի կնոջն իւրմէ Մաքսիմինայ, ի դստերէն Դիոկղետիանոսի, յարոյց հալածանս եկեղեցւոյ»<sup>80</sup>։ Հմմտ՝ «Իսկ Կոստանդինոս թագաւոր զՄաքսիմինայ Դիոկղետիանոսի դուստր ունելով կին, զբազումս ի քրիստոնէից սատակէր»<sup>81</sup>։ Դրան հակառակ, հայերեն Հայսմավուրքում և Սիղբեստրոսի մյուս Վարքերում Մաքսիմինան կոչված է Դիոկղետիանոսի թոռ կամ Մաքսիմինոս թագավորի դուստր։

Վենետիկյան Մխիթարյան Հայր Բարսեղ Սարգիսյանը իր ուսումնասիրության մեջ հայտնում է, որ Վատիկանում պահվող X դարում գրված մի Հայսմավուրքում Սիղբեստրոսի Վարքն ունի վերոհիշյալ «արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն», որը, ըստ երևույթին, հորենացու օգտագործած բնագրի ընդօրինակումն է։ Մեսրոպ վարդապետը այս առթիվ շատ ուշագրավ կարծիք է հայտնում, թե հայերեն Հայսմավուրքում եղած Սիղբեստրոսի Վարքը երկրորդ հունարեն խմբագրությունից է թարգմանված X դարից ավելի վաղ, քանի որ նրանից օգտվել է Ուխտանեսը<sup>82</sup>։ Նշանակում է Վատիկանում պահվող Սիղբեստրոսի Վարքը շատ ավելի հին հունարեն խմբագրությունից է, քան հայերեն Հայսմավուրքի Վարքը։

Բացի այս դավանաբանական և բանասիրական հիմքից, Սիղբեստրոսի Ընդարձակ Վարքը, որի մեջ կերտված է Հռոմի առաջին եպիսկոպոս Սիղբեստրոսի հրաշագործ կերպարը, թարգմանված պետք է լինի V դարի 40-ական թթ.՝ դատելով անմշակ հունարեն հայերենից և հունարենի հիման վրա հորինված նյութական պատճենումներից<sup>83</sup>։

Անհեթեթություն է կարծել, թե հորենացին «Հայոց պատմության» երկրորդ գրքի ԶԳ և ԶԸ գլուխներում օգտվել է VII դարի վերջին Գրիգոր Զորավորեցու համառոտած Սիղբեստրոսի Վարքից, ինչպես պնդում էր ֆրանսիացի պրոֆ. Օգյուստ Կարրիերը իր «Նորագոյն աղբերք Մովսիսի հորենացուց» հոդ-

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>81</sup> Պատմութիւն Վարուց Սրբոյն Սիղբեստրոսի, էջ 721-722:

<sup>82</sup> **Սովորատ Աքուլաստիկոսի** եկեղեցական պատմութիւն, Յառաջաբան, էջ ԺԲ:

<sup>83</sup> Բերեմ մի քանի նյութական հումարանություն. «բաց(ա)» նախաձանցով՝ «գրորոն երկիւղ բացամերժեալ» (մերժելով). «ոսկր ձկան (ոչ կարաց) բացաձգել» (դուրս քաշել). «դժնդակ ցաւամբ ըմբռնեալ զոգիւն բացախլեաց» (հոգիւն խլեց). «ուստի Սրբոյն Սեղբեստրոսի բացորոշեալ ի քաղաքէն» (հեռանալով, փախչելով քաղաքից). «զանմարդի դաւանութիւն առ ի տղայական արեանց բացատրոհելով» (մերժելով, վանելով), «տրամ» նախաձանցով՝ «տրամափախուստ» = «երկու վտանգներից փախչելը». «տրամապայծառացեալ» = «կրկնակի պայծառ», որի փոխարեն Ագաթանգեղոսը և հորենացին գերադրական իմաստով ունեն «համապայծառ» և «գերապայծառ» բարեհունչ ածականներ. այլ նախաձանցներով՝ «վերնագրել» և «մակագրել» = «վերագրել». «հոմագրել», «հոմագրութիւն» = «շարագրել». «շարագրութիւն», շխտելով պատմեցված բարդ բառերի և հումարան անսովոր երականական ձևերի մասին, ինչպես՝ «արտաքսասահմանել»:

վաժառարուն (1891-93 թթ.): Այդ Վարքում հաղորդվում է Կոստանդինի հայր Կոստանդին Բրիտանիայում, մի պանդոկում, գեղեցկակերպ Հեղինեի հետ կենակցելու մասին, որից ծնված Կոստանդինը հետագայում Հռոմում տիրեց հոր գահին՝ սպանելով իր հոր գահաժառանգ որդիներին: Լատիներեն Սուրբ Գրքի (Վուլգատա) թարգմանիչ, հուշակավոր աստվածաբան Հիերոնիմոսը (վախճ. 420 թ.) պատմական շատ տեղեկությունների հետ միասին նունպես թողել է լատիներեն մի մերկացնող վկայություն Բրիտանիայում վախճանված Կոստանդինոսի և անառակ Հեղենայի մերձավորությունից ծնված Կոստանդինի թագավոր դառնալու և քրիստոնյաների դեմ նրա հարուցած հալածանքների մասին: Ահավասիկ այդ հատվածը.

Constantius (տպված է սխալ՝ *Constantinus* – Ա. Մ.) decimo sexto imperii anno diem obiit in Britannia Eboraci, post quem *filius eius Constantinus ex concubina Helena procreatus regnum invadit*. Quarto autem persecutionis anno Constantinus regnare orsus<sup>84</sup>.

Իմ թարգմանությունը՝ «Կոստանդինոսը (իմա՝ Կոստաս Քլորոս) իր կայսրության տասնվեցերորդ տարում մահկանացուն կնքեց Բրիտանիայում, էբորաք կայանում, որից հետո նրա որդի Կոստանդինը՝ ծնված անառակ Հեղենայից (Խորենացին այստեղ պահպանել է նույնիսկ անվան լատիներեն վերջավորությունը)՝ ձեռք գցեց թագավորությունը. հալածանքների չորրորդ տարում Կոստանդինը սկսեց թագավորել»:

Իրականում Խորենացին վերը նշված գլուխներում օգտագործել է Հիերոնիմոսի սույն լատիներեն հատվածը, ընդմիջելով դրանում բերված փաստերը այլևայլ հաղորդումներով՝ թերևս իր օգտագործած աղբյուրը թաքցնելու նպատակով:

Այսպես, Պատմահայրը ՋԳ գլխում գրում է. «Ընդ նոյն աուրս լինին հարսանիք և Մաքսիմինայ դստերն Դիոկղետիանոսի ի նիկոմիդայ, փեսայանալով նմա Կոստանդինանոսի կեսարի որդույ Կոստայ թագաւորին Հռոմայ, որ ոչ էր ի դատերէն Մաքսիմիանոսի, այլ Հեղենայ պոռնկէ ծնեալ: (sic!) [...] Եւ յետ ոչ բազում ամաց մեռեալ Կոստանդ (իմա՝ Կոստանդինոս – sic!)՝ փոխանորդ նմա առաքէ Դիոկղետիանոս գնորին որդի և զիւր որդիացեալն Կոստանդիանոս (sic!): [...] Բայց յետոյ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի դատերէն Դիոկղետիանոսի, յարոյց հալածանս եկեղեցույ (sic!)» [...]: Գլուխ ԶԸ՝ «Զի ի չորրորդ ամէ հալածանացն սկսեալ թագաւորել (sic!) մինչև ցերեքտասաներորդ ամն խաղաղութեան, զոր և այսօր տօնէ աշխարհ»:

Այս փաստերը վկայում են, որ Սիղբեստրոսի ոչ միայն անունը, այլև նրա Վարքը ծանոթ են եղել V դարի առաջին կեսի հայ իրականությանը և այս կամ

<sup>84</sup> **Hieronymi Interpretatio Chronicae Eusebii Pamphili**, in: **Hieronymi Opera omnia**, Patrologiae, tomus XVII, Parisiis, 1846, p. 665.



այն կերպ վկայվել են նաև հայ մատենագրության մեջ: Այդ վկայություններից առավել նշանավորն է «Դաշանց թուղթ» կոչված ընդարձակ վավերագիրը, որի մեջ սեղմ շարադրված է նաև Հռոմի Սիդբեստրոս եպիսկոպոսի վարքը:

Ես այլ առիթով դեռ 1990 թվին ցույց եմ տվել, որ «Դաշանց թուղթը» իր ամբողջ բովանդակությամբ միանգամայն համապատասխանում է IV դարի առաջին տասնամյակների իրավա-քաղաքական և պատմա-աշխարհագրական հանգամանքներին<sup>85</sup>, որպիսի հետևություն հանգեց նաև բյուզանդագետ Հ. Բարթիկյանը 2004 թ.<sup>86</sup>:

Ավելին, այժմ կարող եմ պնդել, որ «Դաշանց թղթի» հայերեն թարգմանությունը դասական գրաբարով գոյություն ունեւ դեռևս V դարի առաջին կեսին: Այդ են հավաստում ոչ թե սոսկ դաշինքի հաճախակի հիշատակումները, այլև այդ բնագրից կատարված էական փոխառությունները V դարի երկրորդ կեսի նշանավոր հայ պատմիչների երկերում: Ստորև բերում եմ իմ վաղուց արած բացահայտումները, որոնց շեմ հանդիպել այլ ուսումնասիրողների մոտ.

1. «Դաշանց թղթի»<sup>87</sup> սկզբում պատկառազգու մակդիրներով է Կոստանդին կայսրը ներկայացնում Հռոմեական կայսրության «տիեզերածավալ» իշխանությունը. «Այս մեր կտակ կայսերական Աստուծով հաստատուն և անփոխադրական, որ գծագրեցաւ հզօր հրամանաւ ինքնակալ և մշտայաղթ կայսեր Կոստանդինոսի Մեծի և օգոստոսիառ թագաւորաց թագաւորի, տիեզերատարած և աշխարհաձաւալ, խրոխտ և անխոնարհելի իշխանութեանս Հռովմայեցոց որ զօրութեամբ նշմարտին Աստուծոյ տիրեմ տիեզերաց ի ծագաց Ովկիանոսի, ահագին ծովուս, մինչև յելս արևու, յաղթող զօրութեամբ պարծանաց խաչիս Քրիստոսի» (էջ 12-13) – «...որք կան ի մերում աշխարհիս ի Հերակլէսի արձանէն մինչ ի յարձանն Մելիտեան, և ի Սեպտէ կղզւոյն, որ հայի հանդէպ Ատլաս լերինն մինչև ի Սիկիլիայ կղզին, յորում կայ հրակատարն բուկանիայ (այսինքն հրաբուլիս)» (էջ 24)<sup>88</sup>:

<sup>85</sup> Ա. Մուշեղյան, «Չորս Հայերի առեղծվածը Մովսես Խորենացու պատմության մեջ», *Վերածնված Հայաստան*, 1990, թիվ 5, էջ 49-58:

<sup>86</sup> Հ. Բարթիկյան, «Դաշանց թուղթ. կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը», *Պատմա-բանասիրական հանդես*, 2004, թիվ 2, էջ 65-116: Ա. Սահակյանը կարծում է, որ «Դաշանց թուղթ»-ը ստեղծվել է Փիլոնի կողմից VII դ. վերջին. տե՛ս նշվ. աշխ., էջ 139:

<sup>87</sup> Կ. Վ. Շահնազարեանց, *Դաշանց թղթի քննութիւնն ու հերքումը*, Պարիս, 1862 (այսուհետ՝ *Դաշանց թուղթ*):

<sup>88</sup> Այստեղ հիշված Սեպտե կղզին գտնվում էր աշխարհի արևմտյան ծայրին՝ այն նեղուցում, որտեղ Արևմտյան օվկիանոսից սկիզբ էր առնում Հունաց (Միջերկրական) ծովը: Սեպտե էր կոչվում նաև նեղուցը, որ նշանակում է «Յոթնյակ» և ցույց է տալիս նեղուցի լայնքը (յոթ մղոն): Այստեղ հիշված *Գադերովնը* (Գադիրոն) կղզի էր Իսպանիայից հարավ՝ աշխարհի արևմտյան ծայրին, Սեպտե նեղուցում: Մովսես Խորենացու հեղինակած Աշխարհացոյցը այդ նեղուցը անվանում է *Հերակլեան ծովամիջոց*, և *Գադիրոն* կղզին նեղուցում տեղադրում է *Սեպտից* արևելք. «Առաջին բնաշխարհ լիբիոյ է Մարիտանիա, որ կոչի Տինգոնիա, յաղագս Տիգին քաղաքի, որ ի նեղցին Հերակլեան ծովամիջոցին, որ է Սեպտ.

2. Եղիշեի Վարդանանց պատմության մեջ բերված է 449 թ. Արտաշատի ժողովին մասնակից հայ նախարարների և եպիսկոպոսների խնդրագիրը («Գիր պաղատանաց») ուղղված Հռոմի Թեոդոս Բ կայսրին՝ Պարսից արքայից արքա Հազկերտի դեմ ռազմական օգնություն տրամադրելու խնդրանքով, հիշեցնելով այն նախնյաց դաշինքը, որ կնքվել էր Հռոմի և Հայաստանի միջև: Տարակույս չկա, որ դրա հետ միասին Հռոմ է ուղարկվել նաև «Դաշանց թուղթը» և դրա վառ ապացույցն են առաջին կետում բերված հատվածները հռոմեական տիեզերածավալ կայսրության մասին, որ գրեթե բառացի արտահայտություն են գտել նաև «Գիր պաղատանաց» թղթում. «առ մեծանունդ Թեոդոս կայսր, բազմասցի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս, որ ձերում անարգել<sup>89</sup> տէրութեանդ ընդդէմ դառնայցէ: Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն (նկատի ունի հենց «Դաշանց թուղթը» – Ա. Մ.) զառաքինի նախնեացն ձերոց, ունելով զԵւրոպէ՝ անցին և տիրեցին և Ասիացոց կողմանցն ի սանմանացն Սէիրայ<sup>90</sup> մինչև ի կողմանս Գաղերովնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա»<sup>91</sup>: Այս կապակցութեամբ ուշագրավ է նաև Եղիշեի վկայությունը, որ Հայոց ժողովը խնդրագրի հետ Հռոմի կայսրին ուղարկել էր նաև նախնյաց դաշինքը հաստատող հիշատակարաններ. «Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»<sup>92</sup>:

3. Մովսէս Խորենացին «Հայոց պատմության» մեջ բերում է Վրթանես եպիսկոպոսապետի գրած նամակի պատճենը («Պատճէն թղթոյն Հայոց») Կոստանդոս կայսրին՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Փոքրին Հայաստանի վրա թագավորեցնելու մասին, և այդ թղթում ոչ միայն հիշատակվում է Կոստանդի-

յելից Գաղիբոն կղզոյ, ուստի ելանէ Յունաց ծովն յովկիանոսէ. քսան եւ վեց մասին յերկայնութեան, եւ երեսուն եւ վեց լայնութեան» (էջ 18):

<sup>89</sup> «Անարգել». ուղղում եմ՝ «անարդիլ», իմա՝ «հսկա, վիթխարի, վիթխարածավալ տէրութեանդ». հմմտ. *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հ. առաջին, էջ 115:

<sup>90</sup> Եղիշեի ռուսերեն թարգմանության խմբագիր Կ. Յուզբաշյանը *Սէիր* տեղադրում է Պաղեստինի հարավային լեռնոտ շրջանում, իսկ Ռ. Վ. Փոմսոնը՝ Սինայում. երկուսն էլ պատկերացում չեն տալիս Հռոմեական կայսրության տիեզերածավալ տարածության մասին: Իրավացի է Եղիշեի մոռացված թարգմանիչ *Գյուտ Աղանյանցը*, ով *Սէիր* անվան տակ հասկանում է Նեպոլը և Սիամը՝ Չինաստանի մոտ (**Եղիշե. Վարդանանց պատմություն**, Քիֆլիս, 1911), որոնք իսկապես գտնվում են *յեյս արևու*, որով հակադարձվում է Հին աշխարհի արևմտյան ծայրին գտնվող Գաղերովնը:

<sup>91</sup> **Եղիշի** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ *Ե. Տէր-Մինասեան*, Եր., 1957, էջ 71-72 (այսուհետ՝ **Եղիշե**):

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 72:

անոսի և Տրդատի միջև կնքված «Դաշանց թուղթը»՝ «Պայման ուխտի» անունով, այլև զարմանալիորեն կրկնվում է նույնությամբ Արտաշատի ժողովի թղթում եղած նկարագրությունը Հռոմի տիեզերածավալ կայսրության մասին. «Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի, որ առ մերում թագաւորին Տրդատայ, և մի՛ տացես զաշխարհս քո Պարսից անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք՝ թագաւորեցուցանել զորդի Տրդատայ զհոսորով: Քանզի Աստուած զձեզ ոչ միայն Եւրոպայ, այլ և ամենայն Միջերկրեայցս տիրեցոյց. և ահ զօրութեան ձերոյ եհաս մինչև ի ծագս ի երկրի: Եւ մեք խնդրեմք առաւել քան զառաւել տիրել ձեզ: Ողջ լերուք»<sup>93</sup>:

Այստեղ հիշված «Պայման ուխտի» արտահայտությունը Վրթանես եպիսկոպոսապետի թղթի հունարեն վերնագրից է թարգմանված այլ բառերով և միանգամայն նույնական է «Դաշանց թուղթ» վերնագրի հետ: Փավստոս Բուզանդը պատմում է, որ երբ Տիրան թագավորին Ատրպատականի Վարազշապուհ մարզպանը խաբեություն գրեց և տարավ Պարսկաստան, հայոց ավագանին պատգամավոր ուղարկեց Սյունյաց Անդովկ նահապետին և Արշարունյաց նահապետ Արշավիր Կամսարականին հունաց կայսեր մոտ՝ զորք և օգնություն խնդրելու: Եվ հունաց կայսրը լսելով նրանց խնդիրքը, փութաց թիկունք լինել Հայոց աշխարհին՝ «Մանաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կոելոց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր»<sup>94</sup>: Դժվար չէ եզրակացնել, որ այստեղ ևս «Ուխտ Դաշանցն» հունարեն վերնագրի մի այլ հայերեն թարգմանությունն է, ինչպես հունաց Կոստանդոս կայսերն ուղղված նախորդ հունարեն թղթում «Պայման ուխտի» վերնագիրը: Կասկածից վեր է, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է դարձյալ խնդրո առարկա «Դաշանց թուղթ» վավերագրին՝ կնքված Կոստանդիանոս կայսեր և Տրդատ թագավորի միջև: Զափազանց ուշագրավ է, որ այս «ուխտ» բառը գիտե և եղիշեն, քանի որ վերոհիշյալ դրվագում գրում է. «Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»<sup>95</sup>: Եվ, իրոք, մեր ձեռքը հասած «Դաշանց թուղթը» որպես երկրորդ վերնագիր կոչվում է «կտակ». «Այս մեր կտակ կայսերական Աստուծով հաստատուն և անփոխադրական, որ գծագրեցաւ հզօր հրամանաւ ինքնակալ և մշտահաղթ կայսեր Կոստանդիանոսի Մեծի և օգոստափառ թագաւորաց թագաւորի»: Եղիշեն ևս հունարեն հիշատակարանը թարգմանում

<sup>93</sup> Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, գիրք Երրորդ, գլ. Ե, էջ 261:

<sup>94</sup> Փաստաոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, դպր. Գ, գլ. ԻԱ, էջ 65: Ընդգծումը մերն է – Ա. Մ.:

<sup>95</sup> Եղիշէ, էջ 72: Ընդգծումը մերն է – Ա. Մ.:

է «Ուխտ հաստատութեան», ինչպէս մեր «Դաշանց թուղթն» է անվանում Կոստանդին կայսրը՝ «կտակ... հաստատուն և անփոխադրական»: Հին և Նոր Կտակարանները ևս կոչվում են Հին Ուխտ և Նոր Ուխտ: Կատիներեն *Testamentum* բառն է՝ «կտակ, ուխտ»: Այս բոլոր վկայութիւնները միահամուռ հաստատում են «Դաշանց թուղթ» կամ «Պայման ուխտի» շատ կարևոր վավերագրի առկայութիւնը V դարի առաջին կեսի հայ մատենագրութեան մեջ, շխտուելով այն մասին, որ այդ վավերագիրը որոշակի հիշատակվել է նաև Հայաստանում IV դարի հունարեն պաշտոնական գրագրութեան մեջ:

«Դաշանց թղթում» նկարագրված է Հայոց Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի այցը Հռոմ և նրանց հանդիսավոր ընդունելութիւնը Կոստանդինոս կայսեր և Հռոմի Սիդեբատրոս պապի կողմից: Դրա հնագույն վկայութիւնն է մեզանում հունարեն Ագաթանգեղոսի Պատմութիւնը, որ ես Դավիթ Հովմայեցու գործն եմ համարում — այստեղ առաջին անգամ հիշատակվում է Տրդատի և Գրիգորի այցը Մեծ Հռոմ՝ 325 թվի Նիկիո ժողովից մի քանի տարի առաջ<sup>96</sup>: Նրանք Մեծ Հռոմում հանդիպեցին Կոստանդին կայսեր և Հռոմի պատրիարք Եվսեբիոսին: Այստեղ Տրդատին և Սուրբ Գրիգորին Հռոմի Եվսեբիոս պատրիարքի ցույց տված ընդունելութիւնը գրեթե նույն կերպ է նկարագրված, ինչ որ հաղորդում է «Դաշանց թուղթը»:

**Հուն. Ագաթ.**՝ «Հասնելով Իտալիա, նրանց դիմավորեցին Հռոմի պատրիկները և հյուպատոսները և բազում սպասավորութեամբ քաղաք մտցրին: Կոստանդին կայսրն էլ ընդունեց (պատվիրակութիւնը), ողջագուրեց սուրբ Գրիգորին և Տրդատ թագավորին և երկուսին էլ հրավիրեց նստել կայսերական կառքի վրա: Նրանք նախ և առաջ Հռոմի պատրիարք Եվսեբիոսի գլխավորությամբ աղոթեցին Պետրոս առաքյալի սուրբ եկեղեցում, որից հետո գնացին արքունիք: Այդ օրը նրանք տոնախմբութեան մասնակցեցին, իսկ հաջորդ օրը Գրիգորն ու Տրդատը կեսարին նվերներ մատուցեցին...»<sup>97</sup> (§ 181, 182):

«Դաշանց թուղթ»՝ «ես ինքնագլուխ Պատապապ Սեդեբատրոս և ամենայն աշխարհի [...] ժողովեցի զամենայն արքեպիսկոպոսունս և զամենայն ուխտ

<sup>96</sup> Ա. Մուշեղյան, «Ագաթանգեղոսի Պատմությունը. ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը», էջ 221: Սույն հոդվածում ես ցույց եմ տվել, որ Վատիկանում 1946 թվին Գարիտի հրատարակած Ագաթանգեղոսի հունարեն գիրքը իր հին շեղանակով հենց այն հունարեն Ագաթանգեղոսի Պատմությունն է, որ գրվել է Հայոց Տրդատ Մեծ թագավորի արժանիքով Մեծ Հռոմից հրավիրված Դավիթ անունով հայագրի նշանագրի և ժամանակագրի ձեռնով: Մեծ Հռոմ (Senior Roma) անվանումն էլ անուղղակի հաստատում է, որ այդ պատմությունը գրի առնելու ժամանակ Կոստանդնուպոլիսը արդեն կոչված էր Կրոսեռ Հռոմ (Junior Roma):

<sup>97</sup> «Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», թարգմանությունը հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, էջմիածին, 1966, Թ, էջ 86: Հրաչ Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. առաջին, Եր., 2002, էջ 179:

եկեղեցույ ի դուռն դոնաբացեացս արհայութեան, ի պատուեալ պատշգամս Սրբոց Պետրոսի, գլխափոխանիս Քրիստոսի եւ Պօղոսի Պռետորի [...] և հզօր աջով սուրբ Առաքելոցս և նշանաւ խաչին Քրիստոսի ձեռնադրեցաք զԿաթողիկոսն Հայոց զՍուրբն Գրիգոր՝ Պապ եւ Պատրիարք եւ Հայրապետ հրամանաւն ի տիեզերական ժողովս, համապատիւ մեր հզօր աթոռոյս, և Երուսաղէմացոց և Անտիօքացոց և Աղեքսանդրացոց, և օրհնեցաք զսա ահաւոր անուամբ Սուրբ Երրորդութեան՝ դնելով ի վերայ արժանաւոր գլխոյ սորա զաջ Սրբոյն Պետրոսի վարչամակաւս Քրիստոսի և արարաք զսա Պատրիարք Հայոց Մեծաց [...]]» (էջ 24-25):

Երկու աղբյուրում էլ նույն ընդունելությունն է՝ շնայած երկրորդում Սիղբեստրոսի ոճն ավելի ճոխ է: Բայց ինչո՞վ բացատրել, որ առաջին դեպքում Տրդատին և Գրիգորին ընդունողը և Սուրբ Պետրոսի եկեղեցում Պատարագ մատուցողը Հռոմի եվսեբիոս պատրիարքն է, իսկ երկրորդ դեպքում՝ Հռոմի Սիղբեստրոս պապը: Պարզվում է, այս հոգևոր առաջնորդները միևնույն անձն են, ինչպես երևում է «Դաշանց թղթի» հետևյալ հատվածից. «Սայապէս եւ ստորագրեցաւ հրովարտակա հրամանաւ իմով մեծի Պապուս Հռովմայեցվոց, Եւսեբիոսի, որ և Սեղբեստրոս, աթոռակալ գլխաւորաց Առաքելոցս Սրբոց Պետրոսի եւ Պօղոսի, որ երկնաւոր և երկրաւոր բանալեօքս ունիմ իշխանութիւն յԱրևմտից մինչև յԱրևելս ի վերայ ամենայն ազգաց և ազանց և լեզուաց քրիստոսադաւանից, կապօղ և արծակօղ ի յերկինս և յերկրի և հրամանահան և հզօր յընդհանուր յեկեղեցիս Քրիստոսի» (էջ 12):

«Դաշանց թուղթ»-ը պահպանել է նաև մի չափազանց կարևոր դրվագ՝ Կոստանդինի պատերազմը Գոթերի դեմ նախքան թագավորելը, որն ավելի հին է, քան Մեսրոպ վրդ. Տեր-Մովսեսյանի հրատարակած Սիղբեստրոսի Ընդարձակ և Համառոտ Վարքերում առկա դրվագը, որի մեջ Կոստանդինը պատանյակ հասակում պատերազմում է բյուզանդացիների դեմ<sup>98</sup>: Հռոմի արքունիքում զրույցի ժամանակ Կոստանդին կայսրը Տրդատին պատմում է Գոթերի դեմ մղած պատերազմի և իր պարտությունից հետո քնի մեջ երկնքից երևացած աստեղագիր լուսեղեն խաչի մասին. «Սոյնպէս եւ մեք պատմեցաք Տրդատայ փեսայ եղբօրս իմում զպատերազմելն իմ յունական զօրօքս ընդ խուժադուժ ազգացն Գոթացոց, եւ զպարտութիւն իմ ի յայնկոյս Դանուբար (ուղղում եմ Դանուբայ – Ա. Մ.) գետոյն հզօրի, եւ զերեւումն ի յերկնից աստեղանման խաչին եւ զվերնագիրն լուսեղէն թէ «այսու յաղթեսցես»: Զորոյ զօրինակն ետու դնել ի դրօշակին իմոյ եւ նկարել ի վառս սանճաղացն եւ ռմպալացն, նաեւ ի նշանս պատերազմական զինուցն եւ ի կուրտակս վեղենդիարացն, որովք զօրացեալ զօրացն իմոց հարին՝ զհոյլսն հեթանոսական հիւսիսա-

<sup>98</sup> Պատմութիւն Վարուց Սրբոյն Սիղբեստրոսի, էջ 714. Համառոտ Սիղբ. էջ 714:

բնակացն: Եւ զդառնալն իմ յաղթութեամբ ի Հոռոմ»<sup>99</sup>: Այս պատումը պետք է նույնացնել Փարպեցու պատմած Կոստանդինի և Գոթերի միջև այն ճակատամարտի հետ, որը տեղի ունեցավ Ղեկովբ գետի մոտ. «Ի գալն աստուածակամ հրամանով սրբոյն Կոստանդիանոսի ի վերայ անթիւ բազմութեանն Գթաց ի պատերազմ, և առ եզերքն Ղեկովբ գետոյ արարեալ զիւր զօրու բանակատեղս, որ և աստուածային տեսչութեանն լինէր արժանի, օրինակեալ նմա յայտնապէս յերկնից աստեղեայ լուսատեսիկ նշան կենսատու խաչին, բերելով շուրջ զինքեամբ ճառագայթից նշանագիրս, թէ «այսու յաղթեսցես». և նորա զարթուցեալ յուսով երևեցելոյ նմա սուրբ նշանին օգնականութեան յաղթեալ վանէր զթշնամեացն բանակսն»<sup>100</sup>:

Դանուբ հզոր գետի հիշատակումը «Դաշանց թղթում» հիմք է տալիս համոզվելու, որ Ղազար Փարպեցու հիշատակած Ղեկովբ գետանունը ձեռագրերում և տպագիրներում աղճատված է եղել և այն վերջապես պետք է ուղղել Դանուբ. սրանով հաստատվում է, որ «Դաշանց թղթի» հեղինակը և Ղազար Փարպեցին օգտվել են միևնույն հին աղբյուրից:

«Դաշանց թղթում» հանդիպում ենք և Սիդբեստրոսի Վարքի հիմնական հատվածին. Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորչին Կոստանդին կայսրը պատմում է, թե ինչպես հաղթական Հոռոմ վերադառնալուց հետո ինքը ենթարկվելով կնոջ ճնշմանը ստեց ճշմարտությանը և քրիստոնյաների դեմ հարուցած պատերազմի հետևանքով որպես պատիժ վարակվեց եղեփանդական բորոտությունով. «Բայց ի ճնշելն զիս երնջիս (կողակցիս – Ա. Մ.) իմոյ, ստեցի ճշմարտութեան և դարձայ ի թշվառութիւն իմ: [...] Դիմադարձ եղէ քրիստոնէական հաւատոյս, մոլեկան պատերազմ յարուցի, զի զօրն իմ կոտորեցի, որք հաւատացեալք էին ի Քրիստոս, զոր ոչ արար անտես Տէր. այլ էարկ զանձամբ իմով զեղեփանդական բորոտութիւն, զոր ոչ կարացին ճարտարքն ճեմարանին բուժել, սոփեստէքն սոկրատեան և գովեալ գումարքն գաղիոսեան մինչև յայց ել մեզ Արեգակն ի բարձանց և լուսաւորեալ բժշկեաց զմեզ Սուրբս Սեդբեստրոս և հաստատեաց զմեզ ի հաւատս ճշմարիտս: Արդ յայսմ հետէ հնազանդիմք հօրս մերոյ հոգեւորի և ղնեմք զթագ թագաւորութեանս մերոյ ընդ ոտիմք հայրապետացս սրբոց»<sup>101</sup>:

Այսպիսով, անտարակուսելի է, որ «Դաշանց թղթում» առկա Հոռոմի Սիդբեստրոս եպիսկոպոսի Վարքից վերը բերված վկայությունները հնագույն հունարեն բնագրից են և ծանոթ են եղել ոչ միայն Ղազար Փարպեցուն, այլև նրանից առաջ ապրած և գործած եղիշեին, Խորենացուն և այլոց:

<sup>99</sup> Դաշանց թուղթ, էջ 22:

<sup>100</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Քուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, գլ. Գ, էջ 3-4:

<sup>101</sup> Դաշանց թուղթ, էջ 22-23:

Ի լրումն այս ամենի հարկ է նշել, որ Հայաստանի և Հռոմի միջև կնքված դաշինքի (այլ կերպ «Դաշանց թղթի») հնագույն հիշատակումը գտնում ենք Ագաթանգեղոսի հին հունարեն պատմության մեջ՝ Կոստանդին կայսրը Տրդատի հետ «առավել ևս ամրապնդեց նախկինում կնքված պայմանագիրը»<sup>102</sup>։ Այստեղից հետևում է, որ Կոստանդին և Տրդատ քրիստոնյա թագավորները հաստատել են վերստին այն դաշինքը, որ կնքվել էր Դիոկղետիանոս և Տրդատ հեթանոս թագավորների միջև։ Հենց միայն այս փաստը վկայում է, որ Ժ. Գարրիտի հրատարակած հունարեն Վարքը, որի հնագույն շերտերը, ըստ իմ նշած ապացույցների, գրվել են Հայոց Տրդատ թագավորի արքունիքում Դավիթ Հռովմայեցու ձեռքով<sup>103</sup>, ավելի հին են, քան հայերեն Ագաթանգեղոսի Պատմությունը, որի մեջ քրիստոնյա հեղինակը հայ-հռոմեական բարեկամության դաշինքը կապում է միայն քրիստոնեություն ընդունած երկու թագավորների հետ. «և կամ ո՛րպէս դարձաւ Տրդատ անդրէն յաշխարհն Յունաց յամս աստուածասէրն (Կոստանդիանոսի որդւոյ – Ա. Մ.) Կոստանդեայ, թագաւորի կացելոյ Յունաց և Հռովմայեցւոց աշխարհին, և կամ ո՛րպէս ուխտ եղեալ, հաստատեալ զնա յաստուածպաշտութիւն՝ դարձեալ լինէր անտի մեծաւ պարգևօք և բազում փառօք»<sup>104</sup>. «մանաւանդ վասն աստուածածանօթութեան նորա (Տրդատայ)՝ առաւել դաշինս կոէր ընդ նմա (Կոստանդիանոս), միջնորդ կալեալ զհաւատսն որ ի տէր Քրիստոսն էր, զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեսցեն»<sup>105</sup>։ Իսկ Դիոկղետիանոսը ամենուրեք ներկայացված է որպես թշնամի՝ բոլոր հեթանոս թագավորների նման։

\*\*\*

Մինչև այժմ բերված բոլոր փաստարկները խիստ անհավանական են դարձնում այսպես կոչված Կամսարականների գաղափարախոսական ծրագիրը՝ Իրանի արքայից արքայի ենթադրյալ գահին տիրելու և այդ նպատակով Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ Փիլոն Տիրակացու կատարած ընդմիջարկումների վերաբերյալ։ VII-VIII դարերի մատենագրության մեջ ոչ մի գրավոր հիշատակություն չկա, որ Փիլոն Տիրակացին որևէ ընդմիջարկություն արած լինի Խորենացու Պատմության մեջ. միայն հայտնի էր, որ Անանիա Շիրակացու ժամանակագրության սկզբում մի հատված է մուծված ջրհեղեղի մասին Խորենացու Պատմությունից<sup>106</sup>։ Ըստ Ա. Սահակյանի կարծիքի՝ կայսրերը

<sup>102</sup> «Ագաթանգեղոսի Պատմության հունական նոտահայտ խմբագրությունը (ՎարՖ)», էջ 179-180, § 190:

<sup>103</sup> Տե՛ս սույն հոդվածի 96-րդ ծանոթությունը:

<sup>104</sup> Ագաթ. Յառաջաբան, § 14:

<sup>105</sup> Ագաթ. § 877:

<sup>106</sup> Հատկապես այժմ, երբ Հ. Բարթիկյանը և Ա. Հակոբյանը հայտնաբերել են, որ ժամանակագրության իսկական հեղինակը Փիլոն Տիրակացին է, որևէ ակնարկ լինելու դեպքում նրանք առաջինը կանդրադատնային այս հարցին:

միայն Հայոց իշխանին էին շնորհում «ապոհյուպատ» տիտղոսը, որից մինչև Հայաստանի թագավոր մի քայլ էր բաժանում<sup>107</sup>։ Սակայն, հայտնի է, որ Հուստինիանոս կայսրը՝ ներսեհ Կամսարականից ավելի վաղ, Աղվանից իշխան Վարազ-Տրդատին է շնորհում ապոհիւպատ տիտղոսը։ Զվանշերի մահից հետո, Աղվանից եղիազար կաթողիկոսը և իշխանները, խորհուրդ անելով, ընտրում են «զնախարար ոմն աւագ, որ մեծարեալն էր կայսերական պատուով զապուհիւպատ պատրկութեան ստացեալ պատիւ, որոյ անուն էր Վարազ-Տրդատ՝ որդի Վարազ-Փերոժի՝ եղբոր Զուանշի»<sup>108</sup>։ Ավելին, նույն ապուհյուպատ պատրիկ Աղվանից իշխանին Հուստինիանոսը կարգում է «էքսարխոս, որ էր երկրորդ թագաւորին»<sup>109</sup>, այսինքն՝ տաւաճաշրջանում կայսեր երկրորդը (փոխարքա), շատ ավելի բարձր, քան Իրանի գահի ենթադրյալ թեկնածու ներսեհ Կամսարականն էր, տալով Վարազ-Տրդատին իրավունք հավաքելու խազարաց, տաճկաց և հոռոմոց համար պահանջվելիք հարկերը<sup>110</sup>։ Բայց Ասողիկ պատմիչը միանգամայն զգաստ է գնահատում այդ պարգևները՝ համարելով, որ արքունատուր պարգևներով Հուստինիանոսը «պատրում, խաբում էր իշխաններին»։ Այնպես որ բյուզանդական «ապուհիւպատ» սնամեջ տիտղոսը որևէ հիմք չպետք է տար ո՛չ անցյալի հայ իշխանին, ո՛չ հետագա որևէ հետազոտողի հույս կապել Բյուզանդիայի հեղհեղուկ և խեղկատակ կայսր Հուստինիանոս Բ-ի հետ։ Նրան բնութագրելու համար բավական է բերել մի քանի պատմական փաստ։ 691 թվին, իր գահակալության յոթերորդ տարում, Հուստինիանոս կայսրը իր գաղթեցրած սկլավոններից ընտրեց 30.000 հոգու, զինեց, անվանեց նրանց «արտակարգ զորք» և նրանց վրա հույս դնելով չեղյալ համարեց 685 թվին արաբների հետ կնքած տասնամյա դաշինքը։ Այդ «արտակարգ զորքն» առնելով, իր ողջ հեծելազորի հետ կայսրը շարժվեց դեպի ծովափնյա Սեբաստուպոլիս քաղաքը։ Արաբները, որ սկզբում դեմ էին խաղաղության վերացմանը, զինվելով, իրենք ևս եկան Սեբաստուպոլիս, գլխավոր ջախջախեցին սկլավոնների «արտակարգ զորքը» և բյուզանդական հեծելազորը, իսկ կայսրը մի կերպ մազապուրծ փախավ։

693 թ., իր գահակալության իններորդ տարում, Հուստինիանոսը Կալինիկոս պատրիարքից պահանջեց, որ աղոթք ասի Կ.Պոլսի պալատի մոտ գտնվող մետրոպոլիտի Սուրբ Աստվածածին եկեղեցին քանդելու համար, որպեսզի նրա տեղում ջրավազան կառուցի, իսկ դիտելու համար վեներաների դեմոսի տրիբունաներ։ Իսկ պատրիարքը պատասխանեց. «եկեղեցու կառուցման համար աղոթք ունենք, բայց եկեղեցի քանդելու վերաբերյալ մեզ աղոթք չեն

<sup>107</sup> Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 137։

<sup>108</sup> Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, գիրք Բ, գլ. 19, էջ 231։

<sup>109</sup> Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 703։

<sup>110</sup> Նույն տեղում։



ավանդել»։ Երբ կայսրը շատ ճնշում գործադրեց, ամեն կերպ աղոթք պահանջելով, պատրիարքն ասաց. «Փա՛ռք միշտ համբերող Աստծուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն»։ Այդ աղոթքը լսելով քանդեցին եկեղեցին և տեղում ջրավազանը կառուցեցին։

694 թ. այս բոլոր խեղկատակություններից հոգնած, հույն մեծամեծների կողով համայն ժողովուրդը խուժեց դեպի ձիարշավարան։ Երբ լույսը ծագեց, Հուստինիանոսին բերեցին ձիարշավարան, մինչ այդ կրակի վրա այրեցին դաժան և արյունարբու սակելլարիոս Ստեփանոս պարսիկին, որը ճիպոտներով ու մահակներով սովորություն ուներ գազանաբար ծեծելու մայրաքաղաքում բոլոր մեծամեծներին, այդ թվում նաև՝ Հուստինիանոսի մորը, որից հետո կայսեր քիթն ու լեզուն կտրեցին և աքսորեցին Խերսոն, իսկ նրա փոխարեն կայսր հուշակվեց Լեոնտիոս զորավարը։

Ինչպես նշել եմ «Բագրատունյաց տոհմի ծագումը Հայկից» ուսումնասիրության մեջ, Խորենացու մեկենաս Սահակ Բագրատունին, ինչպես և հետագա մյուս Բագրատունի իշխանները խիստ դժգոհ են եղել, որ Պատմահայրն իրենց քաջարի տոհմի նախնի է համարել Նաբուգոդոնոսորի գերեվարած հրեա Շամբատին, այդ պատճառով էլ Խորենացու «Հայոց պատմությունը» որպես Բագրատունի իշխանի պատվիրած մատյան և Բագրատունյաց տոհմի սեփականություն երկար ժամանակ եղել է հատուկ պահպանության տակ, և թույլ է տրվել նրանից օգտվել միայն առանձին պատմիչների, այն էլ Բագրատունիների ենթադրյալ հրեական ծագումը չհիշելու պայմանով<sup>111</sup>։ Այդ դժգոհության հաստատումն է, որ IX դարում Վրաստանում հաստատված հայ Բագրատունիների մի շառավիղը՝ Աշոտ Բագրատունին, իրեն հուշակեց Հին Կտակարանի հրեա մարգարե Դավիթ թագավորի սերունդ։

Այս պայմաններում, առավել ևս հաշվի առնելով Կամսարական և Բագրատունյաց տոհմերի միջև եղած ռազմաքաղաքական հակամարտությունը, որի մասին խոսվեց վերը, անհնար է մտածել, թե որևէ Կամսարական իշխանի հանձնակատար անարգել մուտք գործեր Բագրատունյաց տոհմային դիվանը, ուր մնաց թե թույլ տրվեր նրան այդքան անբռնազբոս խեղաթյուրել Բագրատունյաց տոհմի սեփականությունը հանդիսացող և նրանց տոհմի երևելի մարզպան՝ Սահակ Բագրատունու հիշատակը պանծացնող պատմական հուշարձանը։

<sup>111</sup> Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 339:

**Альберт Мушегян**  
**О Кратких редакциях “Церковной истории” Сократа**  
**Схоластика и жития Сильвестра**

В армянской традиции существует несколько совместных копий сокращенных редакций “Жития Сильвестра” и “Церковной истории” Сократа Схоластика (“Малый Сократ”, более поздние авторы применяли это заглавие к совместному тексту двух трудов, т.к. он начинается с предисловия, приписанного Сократу). Редактирование в 696 г. осуществил Филон Тиракаци по приказу католикоса Саака Дзорапореци, дополнив эпизодами из армянской истории, а также антихалкидонскими выпадами. “Большой Сократ” – это собственно перевод “Церковной истории”, т.е. несколько сокращенный вариант греческого оригинала (Филон Тиракаци опустил некоторые детали: письма, речи и т.п.). Житие римского епископа Сильвестра по всей вероятности было переведено в 40-х гг. V века.

Краткие армянские редакции “Церковной истории” Сократа Схоластика и “Жития Сильвестра” с 90-ых годов XIX века применялись гиперкритиками для доказательства, якобы отец армянской историографии Мовсес Хоренаци пользовался ими и, следовательно, жил не в V, а в VIII-IX вв. Статья посвящена разбору соотношений вышеуказанных произведений.

**Albert Musheghyan**  
**On the shorter recensions of Socrates Scholasticus *Ecclesiastical***  
***History and the Life of Silvester***

In the Armenian tradition there exist several joint copies of the shorter recensions of the *Life of Silvester* and Socrates Scholasticus' *Ecclesiastical History* (*Shorter Socrates*, later authors used this title for the joint texts of both writings, since it starts with an introduction ascribed to Socrates). The texts were revised in 696 by P'ilon Tirakac'i by the order of catholicos Sahak Dzorap'orec'i, who added episodes from the Armenian history and anti-Chalcedonian attacks. *Longer Socrates* is the Armenian version of the *Ecclesiastical History* proper, i.e. the slightly abridged variant of the Greek original (P'ilon Tirakac'i omitted some details: letters, sermons etc.). The *Life of Silvester* was probably translated in the 40-ies of the V c.

Starting with the 90-ies of the XIX c., the shorter recensions of Socrates Scholasticus' *Ecclesiastical History* and the *Life of Silvester*, bishop of Rome, were used by hypercriticists as an alleged proof that Father of Armenian historiography Movsēs Xorenac'i made use of them, consequently, he lived not in the V, but in the VIII-IX cc. The article deals with the analysis of the relations of the above-mentioned texts.